Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՁԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ

կազմեց Խ. Մ.

355·2
Մ-16

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵՆՆ ՓՈՂՈՑ, Տ. 1/2
1887

1 MAR 2010
6 .05. 2013
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI 1922
ԱՄԵՆԱ, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
370
Զ022-կա
355-2
Մ-16
1167
1004
15260

ՁԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ

Կազմեց Խ. Մ.

Ի զուր Պրպտեցարդ
Աշխատեցեր Հոգնեա
Թերեալ գրքոյս զգուշանար
Քեզի Հանապարհաց.

Աստրխ., 18 Սեր. 1917 թ.

0,50 3 4 6

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, Տ. 1/2
1887

41.172

21 JUN 2013

Дозволено цензурою. 14 Іюня 1887 г. Тифлисъ.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2.

ԱՌԱՋԱԲԱՆ

Պետական խորհրդի 1886 թուի մայիսի 28-ի բարձրագոյն հաստատված կարծիքով Կովկասի ազգաբնակութիւնը ենթարկվում է զինուորական ծառայութեան։

Որպէս զի ժողովուրդը միջոց ունենայ այդ գործում ճանաչելու իւր իրաւունքները և պարտաւորութիւնները, որով միայն կարելի է, գէթ մասամբ, մի շարք տարաձայնութիւնների և սխալմունքների առաջը առնել,—մենք աւելորդ չը համարեցինք կազմել և հրատարակել հայերէն լեզուով «Զինուորագրական Կանոնադրութիւն» վերնագրով այս գրքոյկը։

Գրքոյկը կազմելիս մենք աչքի առաջ ենք ունեցել թէ 1876 թուի հրատարակած Ընդհանուր Զինուորագրական Կանոնադրութիւնը (уставы о воинской повинности, сводъ законовъ, томъ IV, книга I, ст. 1—224), և թէ այն բոլոր օրէնսդրութիւնները, շրջաբերականները, և կառավարչական կարգադրութիւնները, որոնք հրատարակված են զինուորագրութեան վերաբերութեամբ սկսած 1874 թուականից, այսինքն Ռուսաստանում ընդհանուր զինուորագրութեան մտցնելուց մինչև այժմ։

Այս գրքոյկը պարունակում է՝ ա) Ընդհանուր Զինուորագրական Կանոնադրութիւնը և բ) Կովկասի Զինուորագրութեան վերաբերեալ՝ Պետական խորհրդի բարձրագոյն հաստատված կարծիքը ամբողջապէս։ Գրքոյկը կազմելիս մենք պահպանել ենք Զինուորագրական Կանոնադրութեան յօդուածների յաջորդութեան կարգը։ Ընդհանուր Կանոնադրութեան այն յօդուածները, որոնք երկրորդական նշանակութիւն ունեն Կովկասի համար և կամ որոնք վերաբերում են բուն վարչական մասին, բաց են թողված։ Ընդհանուր Զինուորագրական Կանոնադրութեան մէջ հարկաւոր տեղերում մտցրել ենք Կովկասեան Զինուորագրութեան վերաբերեալ համապատասխան յօդուածները կամ յօդուածների թուահամարները, որով թէ Կանոնադրութիւնն է յարմարեցրած Կովկասի համար, և թէ ընթերցողը հեշտութեամբ կարող է գտնել այս կամ այն հարկաւոր յօդուածը։

Խ. Մալումեանց

1887, մայիս.

ԶԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Պետական Խորհրդի 1886 թուի Մայիսի 28-ի Բարձրագոյն հաստատված կարծիքով Անդրկովկասի ազգաբնակութիւնը և Թերէքի ու Կուբանի վիճակների այլազգիները ենթարկվում են զինուորական ծառայութեան՝ Ընդհանուր Զինուորագրական Կանոնադրութեան հիման վերայ, այն փոփոխութիւնների, յաւելուածների և ժամանակաւոր կարգադրութիւնների հետ միասին, որոնք պարունակվում են Պետական Խորհրդի՝ Կովկասի զինուորագրութեան վերաբերեալ կարծիքի մէջ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ։

Յօդ. 1. Իւրաքանչիւր ռուս հպատակի սրբազան պարտաւորութիւնն է պաշտպանել դահը և հայրենիքը։ Արական ազգաբնակութիւնը, առանց դասակարգի խտրութեան, ենթարկվում է զինուորական ծառայութեան։

Յօդ. 2. Թոյլ չէ տրվում զինուորական ծառայութիւնից ազատվել փող վճարելով. նոյնպէս և թոյլ չէ տրվում, որ այդ ծառայութիւնը կատարելու համար մէկ մարդուն փոխարինէ միւսը իբրև զինատէր (ախոտնիկ)։

Զինուորական ծառայութիւնը կատարելու համար միայն ազգականների մէջ է թոյլ տրվում փոխարի-

նութիւն (Տես Զինուորագրական Կանոնադրութեան 50 և 51 յօդուածները)։

Յօդ. 3. Արական սեռին պատկանող այն անձինք, որոնք տասն և հինգ տարեկանից աւելի են, կարող են արձակվել ռուսաց հպատակութիւնից միմիայն զինուորական ծառայութիւնը լիապէս կատարելուց յետոյ, կամ թէ երբ կը հանեն այնպիսի վիճակ, որը կ'ազատի նոցա մշտական զօրքի մէջ ծառայելուց։

Յօդ. 5. Պետութեան զինուորական ոյժերը բաղկանում են մշտական զօրքից և հանրազօրքից (ապալչենիէ)։ Հանրազօրքը կանչվում է միմիայն պատերազմական ժամանակի արտակարգ հանգամանքներում։

Յօդ. 6. Մշտական զինուորական ոյժերը բաղկանում են ցամաքային և ծովային զօրքերից։

Յօդ. 7. Մշտական ցամաքային զօրքը կազմվում է՝

ա) զօրաբանակից (արմիա), որը լրացնվում է ամբողջ կայսրութիւնից իւրաքանչիւր տարի հաւաքվող նոր մարդկերանցով։

բ) զօրքի պահեստից, որը ծառայում է զօրքը կատարելապէս ամբողջացնելու համար և բաղկացած է այն մարդկերանցից, որոնք արձակված են առաջ քան ծառայութեան ամբողջ ժամանակի աւարտելը։

գ) կօզակ զօրքերից, և

դ) այլազգիներից կազմված զօրքերից։

Յօդ. 8. Ծովային ոյժերը բաղկանում են գործող զօրքից և նաւատորմի (ֆլօտ) պահեստից։

Յօդ. 9. Զօրաբանակի և նաւատորմի զօրքը լրացնելու համար հարկաւոր մարդոց թիւը որոշվում է իւրաքանչիւր տարի օրէնսդրական կարգով, Զինուորական Մինիստրի առաջադրութեամբ, և յայտարարվում է Կառավարիչ Սենատին Բարձրագոյն ուկազով (Տես Կովկասի Զինուորագրութեան Կանոնները յօդ. IV, 1)։

Յօդ. 10. Զինուորակոչով (պրիզիվ) ծառայութեան մէջ մտնելը վճռվում է վիճակ հանելով. վիճակը հանվում է միայն մի անգամ ամբողջ կեանքի համար։ Այն անձինք, որոնք իրանց հանած վիճակի թւահամարին նայելով չը պէտք է մտնեն մշտական զօրքի մէջ, մտցնվում են հանրազօրքի մէջ։

Յօդ. 11. Իւրաքանչիւր տարի վիճակահանութեան ենթարկվում է ազգաբնակութեան միայն մի հասակը, յատկապէս այն երիտասարդները, որոնց քսան տարին լրացել է այն տարուայ Յունվարի 1-ին, երբ կատարվում է զինուորակոչը։ *)

Յօդ. 12. Այն անձինք, որոնք համապատասխանումեն կրթութեան որոշ պայմաններին, իրաւունք ունեն զինուորական ծառայութիւնը կատարել առանց վիճակ հանելու, այլ իբրև կամաւոր (վոյնօապրէդելեաիւշչիեսեա), այս կանոնադրութեան մէջ ամփոփված կանոնների հիման վերայ։

Յօդ. 13. Վիճակահանութեան չեն ենթարկվում և ծառայութեան մէջ չեն ընդունվում այն անձինք, որոնք զրկված են կացութեան բոլոր իրաւունքներից կամ բոլոր այն առանձնակի իրաւունքներից և արտօնութիւններից, որ սեփականացրել են անձամբ և ըստ կացութեան։

Յօդ. 14. Իւրաքանչիւր տարուայ զինուորակոչը և վիճակահանութեամբ ծառայութեան մէջ նշանակելը կատարվում է Նոյեմբերի 1-ից մինչև Դեկտեմբերի 15-ը. իսկ Կովկասում՝ Հոկտեմբերի 15-ից մինչև Դեկտեմբերի 31-ը (Տես Կովկ. զին. կան. յօդ. III, 2)։

---

*) Ծանօթ. օրինակ, 1887 թւին զինուորակոչութեան կ'ենթարկվեն արական սեռի այն բոլոր անձինք, որոնք ծնվել են 1866 թւին։

ՄՂՏԱԿԱՆ ԶՈՐՔԻ ՄԷՋ ԾԱՌԱՅԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԻ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ (ՋԱՊԱՍ) ՄԱՍԻՆ։

Յօդ. 17. Վիճակով ցամաքային զօրքի մէջ մտնողները պէտք է ծառայեն տասն և հինգ տարի, որից վեց տարի պէտք է մնան իսկական ծառայութեան մէջ, իսկ ինն տարի՝ պահեստի մէջ։

Կովկասում վիճակով զօրքի մէջ մտնողները պէտք է ծառայեն տասն և հինգ տարի, որից երեք տարի պէտք է մնան իսկական ծառայութեան մէջ, իսկ տասն և երկու տարի՝ պահեստի մէջ (Տես. Կովկ. զին. կան. յօդ. IV, 2)։

Այն զինուորները, որոնք արձակվելով իսկական ծառայութիւնից մտցնվում են պահեստի մէջ, ստանումեն արձակման թուղթ, որը մինչեոյն ժամանակ ծառայում է եբրև վկայական, թէ նոքա կատարել են իսկական զինուորական ծառայութիւնը։

Եբբ յայտարարվում է, թէ զօրքը պէտք է դնել պատերազմական դրութեան մէջ և առ հասարակ պատերազմական ժամանակում զինուորների արձակել և պահեստի մէջ մտցնելը միանգամայն դադարեցնվումէ։

Յօդ. 18. Նաւատորմի մէջ ծառայելու ընդհանուր ժամանակամիջոցը տասը տարի է, որից եօթ տարի պէտք է մնալ իսկական ծառայութեան մէջ, իսկ երեք տարի՝ պահեստի մէջ։

Յօդ. 19. Վիճակով զօրքի մէջ մտնողների ծառայութեան ժամանակը հաշվում է՝ ա) այն անձանց համար, որոնք մտել են ընդհանուր զինուորակոչի (յօդուած 14) միջոցին, զինուորակոչին յաջորդող տարուայ Յունվարի 1-ից, և բ) այն անձանց համար, որոնք մտել են տարուայ մնացած միջոցներին (բացի 219 յօդուածում նշանակվածներից), զօրքի մէջ մտնելու յաջորդ ամսի առաջին օրից։

Յօդ. 20. Նախորդ 17 և 18 յօդուածներում նշանակված

ծառայութեան ժամանակամիջոցները սահմանվում են յատկապէս խաղաղութեան ժամանակի համար. իսկ պատերազմի ժամանակ թէ ցամաքային զօրքի և թէ նաւատորմի մէջ եղողները պարտաւոր են մնալ ծառայութեան մէջ այնքան ժամանակ, որքան այդ պահանջումէ պետական կարիքը։

Յօդ. 21. Զինուորական և ծովային Մինիստրութիւններին իրաւունք է տրվում, ցամաքային զօրքի և նաւատորմի զինուորներին արձակել և պահեստի մէջ մտցնել՝ առաջ քան թէ նոքա կը լրացնեն 17 և 18 յօդուածներում որոշված իսկական ծառայութեան ժամանակամիջոցը՝ այն դէպքում, երբ այդ կարելի կը լինի։ Զինուորական և ծովային իշխանութիւնները նոյնպէս և իրաւունք ունեն զինուորներին՝ նոցա ծառայութեան միջոցում՝ ժամանակաւոր արձակուրդներ տալ մինչև մի տարի ժամանակով։

Յօդ. 23. Պահեստի զինուորները իսկական ծառայութեան են կանչվում այն դէպքում, երբ անհրաժեշտ է զօրքը կատարելապէս ամբողջացնել։ Այդ կատարվում է Կառավարիչ Սենատին ուղղած Բարձրագոյն ուկազներով։ Զինուորական կամ ծովային Մինիստրութիւնները պահեստի զինուորներին, դոցա պահեստի մէջ եղած ժամանակի ընթացքում, կարող են կանչել զինավարժութիւնների համար, բայց ոչ աւելի քան երկու անգամ պահեստի մէջ եղած ամբողջ ժամանակամիջոցի ընթացքում, և իւրաքանչիւր անգամ ոչ աւելի, քան վեց շաբաթով։

Յօդ. 24. Պահեստից իսկական ծառայութեան կանչվելուց ազատվումեն այն անձինք, որոնք պաշտօն ունեն պետական, քաղաքացիական կամ հասարակական ծառայութեան մէջ, նոյնպէս և երկաթուղիների վարչութիւններում։ Այդ պաշտօնները նշանակված են առանձին ցուցակի մէջ։

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԳՏՆՎՈՂՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Յօդ. 25. Իսկական զինուորական ծառայութեան մէջ եղող անձինք, այդ ծառայութիւնը կատարելու ժամանակ, պահպանումեն իրանց կացութեան բոլոր անձնական և կարողութեան իրաւունքները. բայց այդ ծառայութեան պարտաւորացուցիչ ժամանակամիջոցի ընթացքում, ենթարկվելով ծառայութեան բոլոր պահանջներին և կանոններին, ենթարկվում են և հետևեալ որոշումներին։

1) Իսկական պարտաւորացուցիչ ծառայութեան մէջ եղող զինուորներին արգելվումէ ամուսնանալ։

2) Սպաներին (օֆիցերներին) թոյլ չէ տրվում ամուսնանալ քսան և երեք տարեկան հասակից առաջ։

3) Սպաներին և զինուորներին չէ արգելվում վերցնել առևտրական (վաճառականական և արդիւնաբերական) վայրականներ. սակայն գտնվելով իսկական ծառայութեան մէջ, նոքա ուրիշ կերպ չեն կարող կատարել առևտրական գործեր և կառավարել արդիւնաբերական հիմնարկութիւններ, բայց եթէ հաւատարմատարի, կառավարչի կամ գործակատարի միջոցով։

4) Սպաները և զինուորները կարող են տալ մուրհակներ և ուրիշ ամեն տեսակ պարտագրեր, բայց դոցանով պահանջ կարելի է յայտնել պարտապաններին պատկանող կալուածների դէմ միայն. իսկ անձնական արգելքի (կալանաւորութեան և բանտարկութեան) սպաները և զինուորները, մինչև ծառայութեան պարտաւորացուցիչ ժամանակամիջոցի լրացնելը, չեն ենթարկվում։

Յօդ. 26. Հարկատու դասակարգին պատկանող անձինք, իսկական ծառայութեան մէջ եղած ժամանակը, ազատվում են բոլոր անձնական՝ պետական, զեմստվոյի և հասարակական տուրքերից. նոքա անձամբ ազատվում են նոյնպէս և բնական հարկերից։ Իսկ ինչ վերաբերում է նոցա պատկանող կայքերին, յիշեալ անձինք պարտաւոր են վճարել այդ կայքերի վերայ դրած հարկերը, ուրիշ տուրքերը և բնական հարկերը, ընդհանուր հիմունքների համեմատ։

Վերևի (26) յօդուածում յիշված տուրքերի վճարելը՝ իսկական զինուորական ծառայութեան մէջ գտնվող անձանց վերաբերէն, այլ և դոցա պահեստի մէջ մտնելուց յետոյ՝ մի տարուայ ընթացքում այն հասարակութիւնների պարտաւորութիւնն է, որոնց նոքա պատկանում են։

Անդրկովկասում և Թերէքի ու Կուբանի վիճակների այլազգի բնակիչներ ունեցող տեղերում, իսկական ծառայութեան մէջ եղող գիւղաբնակ և քաղաքաբնակ անձինք, բացի իբրև զինասէր մտնողներից, նոյնպէս և այն ընտանիքները և ծուխները, որոնցից այդ անձինք ընդունված են ծառայութեան մէջ, ազատվում են բոլոր անձնական՝ պետական, զեմստվոյի և հասարակական դրամական տուրքերից. իսկ բնական հարկերից այդ ժամանակամիջոցի ընթացքում ազատվում են միայն ծառայութեան մէջ մտնողները։ Այն անձինք, որոնք գտնվում են պահեստի մէջ, կամ որոնք կանչվել են պահեստից զօրքի շարքերի մէջ մտնելու, նոյնպէս և այն ընտանիքները և ծուխները, որոնց նոքա պատկանում են, օգտվում են յիշեալ արտօնութիւններից մի տարի ժամանակով, սկսած այն օրից, երբ նոքա մտցրվել են պահեստի մէջ կամ արձակվել ծառայութիւնից (Կովկ. զին. կան. յօդ. III, 3)։

Յօդ. 27. Պահեստի մէջ եղողները ենթարկվում են ընդհանուր օրէնքներին ընդհանուր հիմունքների համեմատ, և օգտվում են թէ այն իրաւունքներից, որոնք պատկանում են նոցա ըստ կացութեան, և թէ այն իրաւունքներից, որ ձեռք են բերել ծառայութեան մէջ. սակայն ենթարկվում են և այն առանձին կանոններին, որոնք օրէնսդրական կարգով սահմանված են պահեստը կարգաւորելու համար։

Յօդ. 28. Պահեստի զինուորներին թոյլ է տրվում մտնել պետական քաղաքացիական և հասարակական ծառայութեան մէջ, նոյնպէս և ընտրել ուրիշ տեսակ պարապմունք, պահպանելով ընդհանուր օրէնքներով սահմանված կանոնները։ Սակայն քաղաքացիական պաշտօնավարութեան մէջ բարձր աստիճաններ ստանալը յիշեալ անձանց իրաւունք չէ տալիս նորից զօրքի շարքերի մէջ մտնելիս՝ ստանալ այնպիսի աստիճան կամ կոչում, որը աւելի բարձր է քան այն, որ տուած էր նոցա իսկական ծառայութիւնից արձակելու ժամանակ։

Յօդ. 29. Պահեստի այն զինուորները, որոնք պետական քաղաքացիական ծառայութիւնից կանչված են զօրքի մէջ, վերապահում են այդ ծառայութեան մէջ իրանց ունեցած պաշտօնները, և իրաւունք ունեն նորից այդ պաշտօնները ստանձնելու՝ զօրքի շարքերից արձակվելուց յետոյ։

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԱՆԿԱՐՈՂ ԱՆՁԻՆՔ. ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՒ ԴՈՅԱ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ։

Յօդ. 32. Իսկական ծառայութեան կամ պահեստի մէջ եղող անձինք, այն դէպքում, երբ հիւանդութեան կամ հաշմութեան պատճառով կատարելապէս անընդունակ են դառնում ծառայութեան համար, թէ զօրքի շարքերի մէջ և թէ զօրքի շարքերից դուրս, բոլորովին ազատվում են ծառայութիւնից և դուրս են գցվում պահեստի ցուցակներից, տալով նոցա զինուորական ծառայութիւնը կատարած լինելու վկայական (յօդ. 160 կ. 1)։ Իսկ այն անձինք, որոնք արձակվել են զինուորական ծառայութիւնից վէրքերի պատճառով, կարող են մտնել պահեստի մէջ, եթէ իրանք այդ ցանկանան։

Յօդ. 33. Այն զինուորները, որոնք իսկական ծառայութեան մէջ եղած ժամանակ ծառայութիւնը շարունակելու անընդունակ են դառնում, նոյնպէս և պահեստի այն զինուորները, որոնք զինավարժութիւնների ժամանակ հաշմութիւն են ստանում, կարող են դանձարանից ստանալ ամսական երեք ռուբլի, այն դէպքում, երբ անկարող են անձամբ աշխատելու և չունեն ոչ ապրուստի սեփական միջոցներ և ոչ էլ այնպիսի ազգականներ, որոնք ցանկանային նոցա իրանց հաշուով պահել։ դոցանից նոքա, որոնք կողմնակի հոգատարութեան կարօտ կը համարվեն, կը տեղաւորվեն անկելանոցներում և բարեգործական հիմնարկութիւններում. իսկ եթէ այդպիսի հիմնարկութիւններում ազատ տեղեր չը լինեն, դոքա կը յանձնվեն յուսալի անձանց խնամատարութեանը, վճարելով դանձարանից դոցա պահելու ծախսը, բայց ոչ աւելի, քան ամսական վեց ռուբլի իւրաքանչիւրի համար։

Կովկասեան մելիցիային պատկանողներից նոքա, որոնք պատերազմի մէջ ստացած վէրքերից հաշմանդամ են դարձել, խնամատարվում են 33-երորդ յօդուածի մէջ ցոյց տուած հիմունքների համեմատ այն դէպքում, երբ անկարող են անձամբ աշխատելու և չունեն ոչ ապրուստի սեփական միջոցներ և ոչ էլ այնպիսի ազգականներ, որոնք ցանկանային նոցա իրանց հաշուով պահել։

Յօդ. 34. Պատերազմում սպանված կամ անյայտացած, կամ թէ պատերազմի կռիւների մէջ ստացած վէրքերից մեռած զինուորականների ընտանիքները խնամատարվում են դոցա վերաբերեալ առանձին կանոնների հիման վերայ։

Յօդ. 35. Պատերազմի ժամանակ իսկական ծառայութեան կանչված պահեստի զինուորների ընտանիքներին խնամում են զեմստվոները, նոյնպէս և քաղաքային և գիւղական այն հասարակութիւնները, որոնց մէջ այդ ընտանիքները գտնվումեն։ Այն հասարակութիւնները, որոնք անկարող են իրանց միջոցներով ապահովացնել կարօտ ընտանիքներին, անհրաժեշտ նրպաստը ստանում են դանձարանից։

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԶՕՐՔԸ (ԱՊԱԼՉԵՆԻԷ)։

Յօդ. 36. Պետական Հանրազօրքը կազմվում է՝ իսկական ծառայութեան մէջ չը հաշվող, բայց զէնք կրելու ընդունակ տղամարդկերանցից, սկսած զինուորակոչական (տես յօդ. 11) հասակից մինչև քառասուն տարեկան հասակը։ Մինչև այդ հասակին հասնելը՝ հանրազօրքի մէջ կանչվելուց չեն ազատվում և այն անձինք, որոնք արձակված են զօրաբանակի և նաւատորմի պահեստից։

Յօդ. 37. Քառասուն տարեկանից մեծերին չի արգելվում մտնել հանրազօրքի մէջ այն դէպքում, երբ իրանք այդ ցանկանում են։

Յօդ. 38. Հանրազօրքը կազմող անձինք անուանվում են ռազմիկ (բատնիկ) և բաժանվում են երկու կարգի։

Յօդ. 40. Պետական հանրազօրքը արձակվում է պատերազմը վերջանալու հետ միասին, կամ նոյն իսկ աւելի վաղ, եթէ այլ ևս հարկաւորութիւն չը կայ։

Յօդ. 41. Ծառայութեան մէջ մտած ռազմիկների ընտանիքների խնամատարութիւնը դրվում է զեմստվոների և քաղաքային ու գիւղական հասարակութիւնների վերայ, այդ մասին եղած առանձին կանոնների համեմատ։ Իսկ պատերազմի մէջ սպանված, կամ թէ կռիւներում ստացած վէրքերից մեռած ռազմիկների ընտանիքները խնամատարվում են զինուորականների ընտանիքներին հաւասար կերպով (յօդուած 34)։

ՄԱՐՄՆԱԿԱՆ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՅԵՏԱՁԳՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԲԱՑԱՌՈՒՄՆԵՐԸ։

Յօդ. 42. Վիճակով (յօդուած 10) ծառայութեան մէջ մտնող անձինքներից նոքա, որոնք մարմնական պակասութիւն-

ների կամ հիւանդոտ լինելու պատճառով, կատարելապէս անընդունակ կը լինեն զինուորական ծառայութեան համար, կ'ազատվեն այդ ծառայութիւնից. դորանից բացառութիւն են կազմում դիտմամբ իրանց անդամները վնասողները (տես յօդ. 218), որոնք, յամենայն դէպս, մտցնվում են զօրքի մէջ։

Յօդ. 43. Վիճակահանութեամբ զինուորական ծառայութեան մէջ ընդունելու համար, հասակի ամենափոքր չափը համարվում է երկու արշին և երկու ու կէս վերշոկը։

> Երկու արշին և երկու ու կէս վերշոկ չափը սահմանված է միայն այն անձանց համար, որոնք իրանց հանած վիճակի թուահամարի համեմատ պէտք է մըտնեն մշտական զօրքի մէջ։ Իսկ հանրազօրքի մէջ մըտցընելիս պէտք է ուշադրութեան առնել միմիայն մարդոց զէնք կրելու ընդունակութիւնը, արտաքին տեսքին նայելով, առանց 'ի նկատի ունենալու հասակի չափը։

Յօդ. 44. Ծառայութեան մէջ ընդունելու ժամանակը մի տարով յետաձգվում է այն անձանց համար, որոնք դեռ մարմնով բաւականաչափ չեն աճել, կամ որոնք ունեն այնպիսի հիւանդութիւններ, որոնցով ծառայութիւնից կատարելապէս ազատվել չի կարելի. այդ ժամանակը մի տարով յետաձգվում է նոյնպէս և այն անձանց համար, որոնք դեռ չեն կազդուրվել իրանց կրած հիւանդութիւններից։ Դոցանից նոքա, որոնք մի տարի անցնելուց յետոյ, էլի վատառողջ կը համարվեն, ծառայութեան մէջ կը նշանակվեն յաջորդ տարում, եթէ միայն այդ ժամանակ կ'երևայ, որ ծառայութեան համար պիտանի են։ Հակառակ դէպքում նոքա՝ կամ կը մտցնվեն հանրազօրքի մէջ, եթէ արտաքին տեսքին նայելով զէնք կրելու ընդունակ կը համարվեն, և կամ ընդմիշտ կ'ազատվեն ծառայութիւնից, եթէ կ'երևայ, որ անընդունակ են նոյն իսկ հանրազօրքի համար (Տես յօդ. 154 և 160)։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Յօդ. 45. Ընտանեկան դրութեան նկատմամբ սահմանվումէ արտօնութիւնների երեք կարգ.

1) Առաջին կարգ. ա) միակ աշխատանքի ընդունակ այն որդու համար, որի հայրը աշխատանքի անընդունակ է, կամ որի մայրը այրի է. բ) միակ աշխատանքի ընդունակ այն եղբօր համար, որը ունի մի կամ միքանի որբ եղբայրներ կամ քոյրեր. գ) միակ աշխատանքի ընդունակ այն թոռան համար, որի պապը կամ տատը աշխատանքի ընդունակ որդի չունեն. դ) ընտանիքի միակ որդու համար, եթէ մինչև անգամ նա ունենայ աշխատանքի ընդունակ հայր. և ե) այն ապօրինաձին զաւակի համար, որի հոգացողութեան ներքոյ է աշխատանքի ընդունակ ուրիշ որդիք չունեցող իւր մայրը, կամ քոյրը կամ թէ աշխատանքի անընդունակ եղբայրը։

Կովկասեան երկրի այլազգի բնակիչներից՝ ընտանեկան դրութեան վերաբերեալ առաջին կարգի արտօնութիւնից օգտվում են, բացի 45 յօդուածի 1 կէտի մէջ յիշված անձինքներից, և հետևեալները. ա) աշխատանքի անընդունակ աներոջ կամ այրի զոքանչի ընտանիքում միակ աշխատանքի ընդունակ փեսան, եթէ այդ փեսան ապրումէ աներոջ կամ այրի զոքանչի հետ միևնոյն տնտեսութեամբ, և կամ նոցա հետ մի ծուխ է կազմում, և բ) ընտանիքաւոր միայնակները (Կովկ. զին. կան. յօդ. III, 4)։

2) Երկրորդ կարգ. աշխատանքի միակ ընդունակ որդու համար, որի հայրը նոյնպէս աշխատանքի ընդունակ է, բայց որը ունի մէկ կամ միքանի աշխատանքի անընդունակ եղբայրներ (յօդ. 46)։

3) Երրորդ կարգ. այն անձի համար, որը տարիքով անմիջապէս հետևումէ այն եղբօրը, որը զինուորակոչով իսկական ծառայութեան մէջ է գտնվում, կամ մեռել է այդ ծառայութեան մէջ, և կամ անյայտ կերպով կորել է պատերազմում։

Հ.Ս.Խ.Զ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/XI 1922
Инвентарный номер
ՍՅԱՆԵ ԱՆՎԱՆ
1004
15920

Այն օտար զաւակները, որոնք կրդեգրվել են մինչև տասը տարեկան հասակը, համարվում են հայազգաց որդիք։

Մինչև տասը տարեկան հասակի օտար զաւակները որդեգրելը մեչչանների դասակարգում ապացուցվում է արքունական (կազեննի) պալատների վաւերագրութիւններով, որոնց հաստատութեամբը տեղի է ունեցել յիշեալ գործողութիւնը. իսկ գիւղական դասակարգում դոցա որդեգրելը ապացուցվում է՝ գիւղական ժողովների վճիռներով, որոնք կայացնվումեն որդեգրողների յայտարարութիւնների համաձայն՝ նոյն իսկ օտար զաւակներին ընտանիքների վերայ գրելու ժամանակ (Պետ. խորհրդ. 1885 թ. Յունվարի 15-ի Բարձր. հաստատ. կարծիքը, օրէնսգր. հաւաքածու, № 264)։ (Տես Կովկ. զին. կան. յօդ. III, 5)։

«Որբ քոյր» ասելով պէտք հասկանալ այն քոյրերին, որոնք մարդու չեն գնացել, եթէ մինչև անգամ նոքա լինեն 18 տարեկան, կամ աւելի մեծ։ «Որբ եղբայր» ասելով պէտք հասկանալ ընտանիքի մէջ այն եղբայրներին, որոնք աշխատանքի անընդունակ են, լինի այդ 18 տարեկան չը դարձած լինելու պատճառով, թէ այն պատճառով, որ նոքա աշխատանքի ընդունակ չեն համարվում՝ հիւանդութեան կամ հաշմութեան համար։

Յօդ. 46. Ընտանիքի մէջ աշխատանքի ընդունակ համարվում են տասն և ութ տարեկանից մինչև չիսուն և հինգ տարեկան անձինքը, բացի հետևեալներից. 1) նոքա, որոնք կատարելապէս անկարող են աշխատել հաշմութեան կամ հիւանդոտ լինելու պատճառով. 2) աքսորվածները. 3) երեք տարուց աւելի անյայտ բացակայութեան մէջ եղողները և 4) նոքա, որոնք զինուորակոչով (յօդ. 10) գտնվում են իբրև զինուոր ցամաքային զօրքի կամ նաւատորմի իսկական ծառայութեան մէջ (Տես Կովկ. զին. կան. յօդ. III, 29)։

Ընտանիքի մէջ աշխատանքի ընդունակ համար-

վում են միմիայն արական սեռին պատկանող անձինք։

Բոլոր 18 տարեկան դարձածները համարվումեն ընտանիքի մէջ աշխատանքի ընդունակ անդամներ։

Ընտանիքի մէջ աշխատանքի ընդունակ անդամների մէջ չեն կարող համարվել այն անձինք, որոնք անյայտանում են զինուորական ծառայութիւնից խոյս տալու նպատակով, և կամ որոնք զօրքի մէջ մտնելուց յետոյ՝ փախչումեն ծառայութիւնից։

Յօդ. 47. Ընտանեկան դրութեան արտօնութիւնների իրաւունք ունեցող անձինք ծառայութեան մէջ են նշանակվում (146 և 152 յօդուածներում ցոյց տուած կարգով) միմիայն այն դէպքում, երբ նորակոչ զօրքը լրացնելու համար բաւական չեն լինիլ վիճակահանութեան կոչված միւս մարդիկը։

Յօդ. 48. Առաջին կամ երկրորդ կարգի (յօդ. 45) արտօնութեան իրաւունք ունեցող անձինք զրկվում են այդ իրաւունքից, եթէ հօր կամ մօր, պապի կամ տատի ասելովը՝ ընտանիքի համար իրրև նեցուկ չեն ծառայում։ Այս յօդուածի զօրութիւնը չի տարածվում այն անձանց վերայ, որոնք քրիստոնէութիւն են ընդունել։

Յօդ. 49. Եթէ մի ընտանիքից,—որը բաղկացած է հօրից կամ այրի մօրից երեխաներով, կամ թէ պապից կամ տատից թոռներով, և կամ թէ մեծ եղբօրից փոքրահասակ որբերով,—որևիցէ պատճառով կը պակասի ընտանիքի միակ աշխատանքի ընդունակ անդամը, այն ժամանակ այդպիսի ընտանիքի ծառայութեան մէջ գտնվող անդամներից մէկը, ընտանիքի նախանդամի ընտրութեամբ, արձակվումէ իսկական ծառայութիւնից, բացի պատերազմական և զինավարժութիւնների ժամանակներից։

Յօդ. 50. Եթէ վիճակահանութեանը միաժամանակ մասնակցել են երկու կամ միքանի հարազատ, համարիւն, համամայր

(մօրով մէկ) կամ խորթ եղբայրներ, նոյնպէս և այդ ընտանիքի որդեգիրները, որոնք ծնվել են միևնոյն տարուայ մէջ, և եթէ դոցանից երկուսը կամ աւելի շատերը, իրանց հանած վիճակի թուահամարի համեմատ պարտաւոր կը լինեն զօրքի մէջ ծառայութեան մտնելու, այն ժամանակ դոցանից միայն մէկը կ'ընդունվի, իսկ մնացածները, որոնք հանել են աւելի մեծ թուահամարներ, կը հաշվվեն հանրազօրքի մէջ։ Սակայն այդպիսի եղբայրներին և որդեգիրներին թոյլ է տրվում փոխել իրար մէջ վիճակի թուահամարները։

Այս յօդուածը վերաբերումէ նոյնպէս և այն եղբայրներին, որոնք ծնվել են միևնոյն տարում, և այն երկուսեակ-եղբայրներին, որոնք ծնվել են միևնոյն օրում։

Վիճակի թուահամարի փոփոխելը եղբայրների մէջ թոյլ է տրվում միայն այն դէպքում, եթէ փոխարինողը զինուորական ծառայութեան համար պիտանի կը համարվի։

Յօդ. 51. Իւրաքանչիւր ընտանիքի մէջ այն անդամին, որը պէտք է զօրքի մէջ ծառայութեան մտնի վիճակահանութեամբ, կամ թէ արդէն ծառայութեան մէջ է, յօժարակամ համաձայնութեամբ կարող է փոխարինել հարազատ կամ խորթ, կամ թէ համարիւն կամ համամայր եղբայրը, և կամ հօրեղբօր որդին, եթէ միայն այն եղբայրը, որը կամենում է փոխարինել միւսին, ինքը զինուորակոչի չի ենթարկվում, պահեստի մէջ չի հաշվվում, փոքր չէ քսան տարեկանից, և ոչ էլ մեծ է քսան վեց տարեկանից։ Փոխարինողը պարտաւոր է ծառայել ինչպէս զօրքի շարքերում, այնպէս և պահեստի մէջ, սահմանված ամբողջ ժամանակը, իսկ փոխարինվողը զօրքից արձակվելով՝ հաշվումէ հանրազօրքի մէջ։

ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՅԵՏԱՁԳՈՒՄՆԵՐԸ։

Յօդ. 52. Կայքերի և տնտեսութեան գործերը կարգի բերելու համար, թոյլ է տրվում յետաձգել, բայց ոչ աւելի քան երկու տարով, այն անձանց ծառայութեան մէջ մտնելը, որոնք անձամբ կառավարում են իրանց սեփական անշարժ կալուածքները, կամ թէ իրանց պատկանող առևտրական, գործարանական կամ արդիւնաբերական հիմնարկութիւնները, բացի այն հիմնարկութիւններից, որոնք պարապվում են թունդ խմիչքների մաս-մաս վաճառելով։ Այդպիսի յետաձգումները ծառայութեան ընդհանուր ժամանակամիջոցի մէջ չեն հաշվվում։ (Տես Կովկ. զին. կան. յօդ. IV, 4)։

Կովկասեան երկրի այն տեղերում, որտեղ անասնապահութիւնը արդիւնաբերութեան գլխաւոր ճիւղն է կազմում, թոյլ է տրվում, բայց ոչ աւելի քան մի տարով, յետաձգել այն անձանց իսկական զինուորական ծառայութեան մէջ մտնելը, որոնք անմիջապէս իրանք են խնամում իրանց պատկանող խոշոր և մանր ապրանքների հօտերը։ Այդպիսի յետաձգութեան իրաւունք ստանալու վերաբերութեամբ՝ Կովկասի զանազան տեղերի համար ապրանքների ամենափոքր քանակութիւնը որոշումէ քաղաքացիական մասի Կառավարչապետը (Կովկ. զին. կան. յօդ. IV, 3)։

ՈՒՍՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՅԵՏԱՁԳՈՒՄՆԵՐԸ։

Յօդ. 53. Ուսումնարանական հիմնարկութիւնների սանները կանչվում են զինուորական ծառայութեան որոշված (յօդ. 11) հասակին հասնելուց յետոյ, ուրիշների հետ հաւասար կերպով. բայց ուսումը աւարտելու համար վիճակահանութեամբ

նոցա ծառայութեան մէջ մտնելը՝ իրանց ցանկացած դէպքում՝ յետաձգվում է.

1) Մինչև քսան և երկու տարեկան դառնալը՝ երկրորդ կարգի ուսումնարանական հիմնարկութիւնների մէջ սովորողների համար։

2) Մինչև քսան և չորս տարեկան դառնալը՝ ուղղափառ, հայ-լուսաւորչական և կաթոլիկական հոգևոր սեմինարեանների համար։

4) Մինչև քսան և եօթ տարեկան դառնալը՝ առաջին կարգի ուսումնարանական հիմնարկութիւնների մէջ սովորողների համար։

5) Մինչև քսան և ութ տարեկան դառնալը՝ ուղղափառ և կաթոլիկական հոգևոր ճեմարանների մէջ սովորողների համար։

Կովկասեցի այն ընտիկներին, որոնք մինչև այս օրէնքի հրատարակութեան օրը ընդունված են եղել ուսումնարանական հիմնարկութիւններում, իրաւունք է տրվում, իրանց խնդրած դէպքում, ուսումը աւարտել, առանց սահմանավակելու նրանց որևիցէ տարիքով (Կովկ. զին. կան. յօդ. IV, 5)։

Էջմիածնի հայ-լուսաւորչական ճեմարանի աշակերտների վիճակով զօրքի մէջ ծառայութեան մտնելը՝ իրանց ցանկացած դէպքում, յետաձգվում է մինչև քսան և ութ տարեկան դառնալը՝ ուսումը աւարտելու համար (Կովկ. զին. կան. յօդ. III, 6)։

Յօդ. 54. Նախորդ 53 յօդուածում յիշված ուսումնարանական հիմնարկութիւնների մէջ սովորողները իրաւունք ունեն յայտնել, բայց ոչ ուշ քան թէ վիճակահանութեան կանչվելուց երկու ամիս առաջ, թէ ցանկանում են զինուորական ծառայութիւնը կատարել կամաւորների իրաւունքներով։ Այդ մասին յայտարարողները՝ ազատվելով վիճակահանութիւնից, իրանց ուսումը աւարտելու համար օգտվում են վերոյիշեալ յետաձգումներով։

Յօդ. 55. Այն անձինք, որոնք առաջադիմութեամբ աւարտել են ուղղափառ հոգևոր ճեմարաններում և սեմինարիաներում, ուսումը աւարտելուց յետոյ օգտվում են մի տարի յետաձգումով՝ հոգևոր կոչում ստանալու համար, որը ազատում է զինուորական ծառայութիւնից (յօդ. 62)։

Այն անձինք, որոնք առաջադիմութեամբ աւարտել են հայ-լուսաւորչական հոգևոր ճեմարանում և սեմինարիաներում, ուսումը աւարտելուց յետոյ օգտվում են մի տարի յետաձգումով հոգևոր կոչում ընդունելու համար, որը ազատում է զինուորական ծառայութիւնից (Կովկ. զին. կան. յօդ. III, 7)։

Յօդ. 56. Այն անձինք, որոնք հասել են կրթութեան այն աստիճաններին, որոնք յիշված են ներքևում, վիճակով զինուորական ծառայութիւնը կատարելիս՝ օգտվում են ծառայութեան պակասեցրած ժամանակով, հետևեալ հիման վերայ.

1) Համալսարաններում և առաջին կարգի ուրիշ ուսումնարանական հիմնարկութիւններում աւարտողները, կամ դոցա համապատասխան քննութիւն բռնողները մնումեն իսկական ծառայութեան մէջ վեց ամիս, իսկ պահեստի մէջ տասն և չորս տարի և վեց ամիս։ *)

Առաջին էրգէ ուսումնարանական հիմնարկութիւններն են. Համալսարանները, հոգևոր ճեմարանները, Լեռնային ինստիտուտը, Անտառային ինստիտուտը, Մոսկվայի Լազարեան ճեմարանը (մասնագիտական լսարանները աւարտողների համար,) և այլն։

2) Գիմնազիաների կամ ըէալական դպրոցների վեցերորդ դասատնից, կամ հոգևոր սեմինարիաների երկրորդ դասատնից, և կամ թէ երկրորդ կարգի ուրիշ ուսումնարանական հիմնարկութիւններից աւարտողները և կամ դոցա համապատասխան քննութիւն բռնողները մնում են իսկական ծառայութեան մէջ մէկ տարի և վեց ամիս, իսկ պահեստի մէջ տասն և երեք տարի և վեց ամիս (տես 1886 թ. օրէնքը, երես 24)։

Երկրորդ էրգէ ուսումնարանական հիմնարկութիւններն են. հոգևոր սեմինարիաները, գիմնազիաները ռէալական դպրոցները, ուսուցչական ինստիտուտները, կաթոլիկական հոգևոր սեմինարեաները, հայ-լուսաւորչական հոգևոր սեմինարեաները և այլն։

3) Երրորդ կարգի ուսումնարանական հիմնարկութիւններում աւարտողները, կամ դոցա դասընթացի քննութիւն բռնողները մնում են իսկական ծառայութեան մէջ երեք տարի, իսկ պահեստի մէջ տասն և երկու տարի։

Երրորդ էրգէ ուսումնարաններն են. հոգևոր դպրոցները, պրոգիմնազիաները, քաղաքային դպրոցները, գաւառական դպրոցները, ուսուցչական սեմինարեանները և այլն։

4) Ժողովրդական սկզբնական դպրոցների կամ չորրորդ կարգի ուրիշ ուսումնարանների վկայական ունեցողները մնումեն իսկական ծառայութեան մէջ չորս տարի, իսկ պահեստի մէջ տասն և մէկ տարի։

Չորրորդ էրգէ ուսումնարաններն են. միդասարանեան քաղաքային, գիւղական դպրոցները, եկեղեցական-ծխական դպրոցները և այլն։

Զինուորական ծառայութեան արտօնութիւնների վերաբերութեամբ Կովկասեան ուսումնարանները չորրորդ կարգի դպրոցական հիմնարկութիւնների շարքի մէջ հաշուելը տեղի է ունենում, Կովկասի քաղաքացիական մասի Կառավարչապետի հետ նախօրէն բանակցելուց յետոյ, Մինստրի կամ Կառավարչապետի (որի իրաւասութեան ներքոյ որ գտնվում է ուսումնարանը) զինուորական և ժողովրդական լուսաւորութեան Մինիստ-

---

) Առաջին և երկրորդ կարգի ուսումնարանական հիմնարկութիւններում աւարտողների և կամ դոցա համապատասխան քննութիւն բռնողների համար՝ 1886 թ. փետրվարի 10-ի օրէնքով ծառայութեան ժամանակամիջոցը փոխված և շատացրած է։ Տես 24-երորդ երեսը։

րութիւնների փոխադարձ համաձայնութեան հիման վերայ։ (Կովկ. զին. կան. յօդ. III, 8)։

1886 թուի փետրվարի 10-ի Պետական Խորհրդի բարձրագոյն հաստատված կարծիքով սահմանված է.—առաջին և երկրորդ կարգի ուսումնարանական հիմնարկութիւնների ամբողջ դասընթացը աւարտողները, նոյնպէս և գիմնազիաների և ռէալական դպրոցների վեցերորդ դասատնից, և կամ հոգևոր սեմինարիաների երկրորդ դասատնից աւարտողները, կամ թէ դոցանից մէկի համապատասխան քննութիւն բռնողները պէտք է մնան իսկական ծառայութեան մէջ երկու տարի, իսկ պահեստի մէջ՝ տասն և երեք տարի։

Զինուորական ծառայութիւնը կատարելու համար, եկեղեցական-ծխական դպրոցներում աւարտող աշակերտներին չորրորդ կարգի արտօնութեան վկայականները տրվումեն՝ սկզբնական դպրոցների ընդհանուր կանոնների համապատասխան քննութեան ենթարկելուց յետոյ (Բարձր. հաստատ. 13 յունիսի 1884 թ., օրէնսդր. հաւաքածու. № 753)։

Այլազգաւան եկեղեցական դպրոցներում աւարտողներից՝ չորրորդ կարգի արտօնութեան վկայական ստանալու համար քննութիւն տուողները պակաս չը պէտք է լինեն տասն և վեց տարեկանից, և ոչ էլ աւելի քան տարեկանից։

Յօդ. 62. Զինուորական ծառայութիւնից ազատվում են բոլոր քրիստոնէական դաւանութիւնների եկեղեցական պաշտօնեաները։

ԶԻՆՈՒՈՐԱԿՈՉԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ (ՈՒՂՇԱՏՈԿ) ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ։

Յօդ. 67. Զինուորագրութիւնը կատարելու համար կազմվումեն զինուորակոչական բաժիններ։ Իւրաքանչիւր բաժնի մէջ

մտնումէ կամ գաւառի մի մասը, կամ ամբողջ գաւառը (Տես Կովկ. զին. կան. յօդ. III, 9)։

Զինուորակոչական բաժիններ կազմելիս՝ վոլոստները, նոյնպէս և գիւղական և աուլի հասարակութիւնները ոչ մի դէպքում մաս-մաս չեն բաժանվում (Կովկ. զին. կան. յօդ. III, 11)։

Յօդ. 73. Իւրաքանչիւր զինուորակոչական բաժնում տեղ է որոշվում այն անձանց զինուորակոչի և ընդունելութեան համար, որոնք պէտք ենթարկվեն զինուորական ծառայութեան (Տես. Կովկ. զին. յօդ. III, 10, 12 և 13)։

Յօդ. 74. Բաժնի ամենահեռաւոր գիւղերը առհասարակ չիսուն վերստից աւելի հեռու չը պէտք լինեն կոչնատեղից։

ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՎԱՐՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Յօդ. 81. Իւրաքանչիւր նահանգում և վիճակում կազմվում է նահանգական կամ վիճակային զինուորագրական ատեան նահանգապետի կամ վիճակապետի նախագահութեամբ (Տես Կովկ. զին. կան. յօդ. III, 14 և 15)։

Յօդ. 84. Իւրաքանչիւր գաւառում կամ շրջանում կազմվում է գաւառական կամ շրջանի զինուորագրական ատեան։

Անդրկովկասեան նահանգներում և Թերէքի ու Կուբանի վիճակներում՝ գաւառական (շրջանի) զինուորագրական ատեանը կազմվումէ ազնվականութեան գաւառական պարագլխից, գաւառապետից կամ այդ կոչմանը համապատասխարող անձից, հաշտարար միջնորդից, որին պէտք է նշանակի նահանգապետը, և մի սպայից, որին պէտք է նշանակի զինուորական վարչութիւնը։ Ատեանին նախագահումէ ազնվականութեան գաւառական պա-

ղաղլուխը, իսկ այն տեղերում, ուր չը կայ ազնվականութեան ներկայացուցիչ,—գաւառապետը (շրջանապետը)։ Այն տեղերում, որտեղ չեն հաստատված հաշտարար միջնորդներ, դրանց փոխարինում են նահանգապետի (վիճակապետի) նշանակած աստիճանաւորը և տեղացիներից երկու պատուաւոր բնակիչներ, նոյնպէս նահանգապետի ընտրութեամբ։ Երբ ատեանը գործումէ այնպիսի զինուորակոչական բաժնում, որի մէջ կան և քաղաքացիներ, այն ժամանակ ատեանը լրացնումէ քաղաքային վարչութեան մի անդամով, որին նշանակումէ ինքը վարչութիւնը, իսկ ուր չը կայ քաղաքային վարչութիւն,—քաղաքային հասարակութեան ընտրած անդամով։ Բացի դորանից, երբ ատեանը գործումէ կոչնատեղում, նրա անդամների թւի մէջ մտցնումէ բաժնի բնակիչներից մէկը, որին նշանակումէ նահանգապետը (վիճակապետը)։ (Կովկ. զին. կան. յօդ. III, 16)։

Թիֆլիս քաղաքում կազմվումէ քաղաքային զինուորագրական առանձին ատեան, քաղաքագլխի նախագահութեամբ, և բաղկանումէ՝ մի սպայից, որին նշանակումէ զինուորական վարչութիւնը, մի աստիճանաւորից, որին նշանակումէ Թիֆլիսի ոստիկանապետը, և քաղաքային հասարակական վարչութեան երկու անդամներից, նոյն վարչութեան ընտրութեամբ (Կովկ. զին. կան. յօդ. III, 17)։

Յօդ. 91. Զինուորական ծառայութեան մէջ մտնող անձանց գննելու և ընդունելու համար գաւառական կամ շրջանի և քաղաքային ատեաններում նշանակվում են՝ երկու երկու բժիշկ (մէկը քաղաքացիական իսկ միւսը զինուորական վարչութիւնից) և զինուորական զօրընկալ։ Իսկ նահանգական և շրջանի ատեաններում՝ վերաքննութեան համար նշանակվում են նոյնպէս երկու երկու բժիշկ։ Բժշկի մասնակցութիւնը ատեանների գործերի մէջ կայանում է նրանում, որ նա կարծիք պէտք է յայտնի այն անձի պիտանի լինելու մասին, որը ծառայութեան մէջ պէտք է ընդունվի։ Իսկ զինուորական զօրընկալի պարտաւորութիւնը որոշվում է զինուորական և ծովային Մինիստրութիւնների առանձին հրահանգով։

Ծանօթ. Սեբեբում թոյլ են տրվում հետևեալ շեղումները այդ յօդուածի (91) մէջ ցոյց տուած կանոններից. 1) ատեանի մէջ կարելի է նշանակել միայն մի բժիշկ, և 2) զինուորական զօրընկալի պարտաւորութիւնները կարող են դրվել այն սպայի վերայ, որը ատեանի անդամ է։

Նախորդ 91 յօդուածի ծանօթութեան մէջ յիշատակված կարգադրութիւնների գործադրութիւնը տարածվում է նոյնպէս և Կովկասեան երկրի վերայ (Կովկ. զին. կան. III, 18)։

Յօդ. 93. Զինուորակոչի և զինուորական ծառայութեան մէջ ընդունելու գործավարութեան համար, նոյնպէս և այդ առարկայի մասին մասնաւոր մարդոց կառավարչական տեղերի և անձնաւորութիւնների հետ ունենալիք յարաբերութիւնների համար՝ գործ է դրվում հասարակ՝ դրուագաւոր տուրքի չենթարկվող թուղթ։

ԶԻՆՈՒՈՐԱԿՈՉԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՎԵՐԱՅ ԴՐՎԵԼԸ։

Անդրկովկասում և Թերէքի ու Կուբանի վիճակների այլազգի ժողովուրդ ունեցող տեղերում, ամէն կացութեան մարդիկ հաշվվում են զինուորակոչական բաժինների մէջ այն քաղաքների և գիւղերի գտնված տեղի համեմատ, որոնց մէջ նոքա մշտական բնակութիւն ունեն (Կովկ. զին. կան. յօդ. III, 19)։

Յօդ. 96. Բաժնի վերայ դրվելը տեղի է ունենում այն յայտարարութեան հիման վերայ, որը դրվողը պարտաւոր է ներկայացնել՝ մետրիքականի կամ դորան փոխարինող մի վկայականի հետ՝ գաւառական, շրջանի կամ քաղաքային այն զինուորագրական ատեանին, որի իրաւասութեան ներքոյ է գտնվում դրվելու համար իր ընտրած բաժինը։

Յօդ. 97. Արական սեռի բոլոր անձինք, բացի գիւղական հարկատու դասակարգին պատկանող բնակիչներից, պարտաւոր են տասն և վեց տարեկան դառնալուց յետոյ, և ոչ ուշ քան այն տարուայ դեկտեմբերի 31-ը, երբ իրանց քսան տարին լրանում է,—ստանալ վիայական այն մասին, որ գրված են զինուորակոչական բաժնի վերայ:

Յօդ. 98. Զինուորակոչական բաժինների վերայ գրվելու մասին վկայական տալիս են գաւառական, շրջանի կամ քաղաքային զինուորագրական ատեանները:

Կովկասեան երկրում զինուորակոչական ցուցակները կազմվումեն՝ ա) գիւղական բնակիչների համար,—առանձին յանձնաժողովների ձեռքով. այդ յանձնաժողովները բաղկանումեն գիւղական (աուլի) տանուտէրից, գիւղացի երկու բնակիչներից, գաւառապետի (շրջանապետի) նշանակելովը, և գիւղական քահանայից. այս յանձնաժողովները գտնվումեն գաւառական (շրջանի) ոստիկանութեան պաշտօնեաների վերահսկողութեան և ղեկավարութեան ներքոյ. բ) մէշչաններինը և արհեստաւորներինը՝ այն քաղաքներում, ուր մտցրված է 1870 թ-ի քաղաքային պալաժենեան,—քաղաքային վարչութիւնների ձեռքով. գ) այն տեղերում, ուր մտցրված են պարզ կազմակերպված հասարակական վարչութիւններ,—քաղաքային ստարոստաների ձեռքով, և դ) այն տեղերում, ուր կան պատգամաւորներ քաղաքային հասարակութեան կողմից՝ տեղական ոստիկանական վարչութիւնների մէջ,—այդ պատգամաւորների ձեռքով յիշեալ վարչութիւնների աջակցութեամբ: Ուրիշ կացութեան պատկանող անձանց համար զինուորակոչական ցուցակները կազմվումեն տեղական ոստիկանութիւնների ձեռքով (Կովկ. զին. կան. յօդ. III, 20):

Յօդ. 100. 97-երորդ յօդուածում յիշատակված անձինք ամուսնանալիս և պետական կամ հասարակական ծառայութեան մէջ մտնելու ժամանակ՝ պարտաւորեն ներկայացնել վկայական զինուորակոչական բաժնի վերայ գրված լինելու մասին:

ԶԻՆՈՒՈՐԱԿՈՉԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԵԼԸ:

Յօդ. 102. Իւրաքանչիւր տարուայ սկզբում՝ զինուորակոչի համար կազմվումեն մասնաւոր զինուորակոչական ցուցակներ:

Յօդ. 103. Զինուորակոչական ցուցակների մէջ մտցնվում են բոլոր այն անձինք, որոնք հասել են քսան տարեկան հասակին զինուորակոչի նախորդ տարուայ ընթացքում, բացի զօրքի մէջ իբրև կամաւոր մտնողները, որոնց համար իւրաքանչիւր բաժնում պահվում է առանձին հաշիւ:

Անդրկովկասում և Թերէքի ու Կուբանի վիճակների այլազգի ժողովուրդ ունեցող տեղերում, զինուորակոչական ցուցակներ կազմելու համար իրրև հիմք ծառայում են՝ ա) մետրիքական քաղուածքները, բ) ընտանեգրական ցուցակները և գ) անձնական ցուցմունքները (Կովկ. զին. կան. յօդ. III, 21):

Յօդ. 107. Մետրիքական քաղուածքը պէտք է պարունակի իւր մէջ արական սեռի այն բոլոր անձանց ցուցակը, որոնց հերթը հասել է զինուորական ծառայութիւն կատարելու համար:

Յօդ. 108. Զինուորակոչական բաժինների վերայ գրվելու վկայականներում, այլ և զինուորակոչական ցուցակներում, տարիքը նշանակվում է մետրիքական վկայականների և մետրիքական քաղուածքների, և կամ ուրիշ այնպիսի դոկումենտների համաձայն, որոնք, օրէնքով, փոխարինում են մետրիքական վկայականներին:

Յօդ. 109. Եթէ մէկը այն անձինքներից, որոնք պարտաւոր են զինուորակոչական բաժնի վերայ գրված լինելու վկայական (յօդ. 97) ստանալ, այդ վկայականը պահանջելիս չի ներկայացնել նախորդ (108) յօդուածում յիշատակված վկայականներից և ոչ մէկը, և ցոյց կը տայ, որ ինքը տասն և ինն տարեկանից աւելի չէ, այն ժամանակ նրան տրվում է վկայական, նշանակելով տարիքը իւր ցուցմունքի համեմատ: Իսկ եթէ մէկը ցոյց կը տայ, թէ նա տասն և ինն տարեկանից աւելի է, այն ժամանակ նրան տրվում է բաժնի վերայ գրվելու ժամանակաւոր վկայական՝ առանց տարիքը նշանակելու. իսկ դորանից յետոյ արդէն վկայականի մէջ տարիքը նշանակում է արտաքին տեսքին նայելով՝ գաւառական, շրջանի կամ քաղաքային զինուորագրական ատեանը, 138-երորդ յօդուածի հիման վերայ: (Տես Կովկ. զին. կան. յօդ. III, 22):

Յօդ. 111. Տարիքը որոշելու համար ներկայացրած դոկումենտի ստոյգ լինելու մասին կասկած կարող են յարուցանել՝ կամ նոյն իսկ այն հիմնարկութիւնները, որոնց պարտաւորութիւնն է կազմել զինուորակոչական ցուցակներ և վկայականներ տալ զինուորակոչական բաժինների վերայ գրված լինելու մասին, և կամ կողմնակի անձինք:

Յօդ. 112. Տարիքը որոշվում է արտաքին տեսքով՝ 1) այն բոլոր դէպքերում, երբ տարիքի մասին չը կայ ոչինչ օրինական վկայական:

Անդրկովկասում և Թերէքի ու Կուբանի վիճակների այլազգի ժողովուրդ ունեցող տեղերում, բացի այս կանոնադրութեան 112-երորդ յօդուածի 1 կէտի մէջ յիշատակված դէպքերից, հասակը որոշվում է արտաքին տեսքով, և հետևեալ դէպքերում. ա) քրիստոնէական դաւանութեան պատկանող անձինքներինը՝ այն դիպուածում, երբ տարիքը ցոյց է տուած միայն ընտանեգրական ցուցակի մէջ և կասկած է յարուցանվում այդ ցուցմունքի ստուգութեան մասին, և բ) ոչ-քրիստոնէական դաւանութեան պատկանող անձինքներինը՝ այն բոլոր դիպուածներում, երբ կասկած է ծագում հասակի վերաբերեալ վկայականների ստուգութեան մասին, առանց ի բաց առնելու և մետրիքականները (Կովկ. զին. կան. յօդ. III, 23):

Յօդ. 114. Այն անձինք, որոնց հասակը պէտք է որոշվի արտաքին տեսքով, այդ նպատակի համար ներկայանումեն իրանց բաժնի կոչնատեղը, ամենամօտիկ զինուորակոչի (ծառայութեան մէջ մտնելու) ժամանակ:

Յօդ. 115. Մասնաւոր զինուորակոչական ցուցակների կազմելը (102) պէտք է վերջացնվի մինչև ապրիլի 1-ը: Դրանից յետոյ այդ ցուցակները հանդէս են բերվում կամ կախվում են, երկու շաբաթ ժամանակով, գաւառական, շրջանի կամ քաղաքային զինուորագրական ատեաններում, քաղաքային վարչութիւններում և վոլոստի վարչատներում, ըստ պատկանելոյն. իսկ այն ցուցակները, որոնք վերաբերումեն այս կամ այն գիւղական հասարակութեանը, կարդացվումեն շինական ժողովներում (Տես Կովկ. զին. կան. յօդ. III, 24):

Յօդ. 116. Իւրաքանչիւր մարդ իրաւունք ունի, ցուցակները գաւառական, շրջանի կամ քաղաքային զինուորագրական ատեաններին ներկայացնելու ժամանակից երկու շաբաթ առաջ, յայտարարել ցուցակների մէջ նկատած պակասորդների և սխալների մասին: Այդ յայտարարութիւնները պէտք է մրցցնվեն առանձին գրքի մէջ, պէտք է ստուգվեն եօթն օրուայ ընթացքում ձեռքի տակ եղած դոկումենտների հիման վերայ, հարց ու փորձով, կամ ուրիշ միջոցներով, և ցուցակների մէջ յայտնված սխալները պէտք է ուղղվեն: Գաւառական, շրջանի և քաղաքային զինուորագրական ատեանների ձեռքով կազմվող մասնաւոր զինուորակոչական ցուցակների մէջ եղած պակասորդների և սխալների մասին պէտք է յայտարար-

վի անմիջապէս այդ ատեաններին՝ ներկայ (116) յօդուածի մէջ որոշած երկու շաբաթ ժամանակամիջոցի ընթացքում։

Յօդ. 117. Այն անձինք, որոնք անց են կացրել 116 յօդուածում ցոյց տուած ժամանակամիջոցը, իրաւունք ունեն ցուցակների մէջ մտած պակասորդների և սխալների մասին յայտարարել դաւառական, շրջանի կամ քաղաքային զինուորագրական ատեաններին միմիայն այն դէպքում, երբ կարող կը լինեն ներկայացնել ապացոյցներ, որ ժամանակը անցկացնելու պատճառը առանձնակի և ուշադրութեան կատարելապէս արժանի հանգամանքներ են եղել։ Այդպիսի ապացոյցների որ աստիճանի ուշադրութեան արժանի լինելը որոշում են յիշեալ ատեանները։

Յօդ. 118. Մասնաւոր զինուորակոչական ցուցակներ կազմող հիմնարկութիւնները և պաշտօնատար անձինքը, ոչ ուշ քան մայիսի 1-ը, ներկայացնում են թէ այդ ցուցակները և թէ այն անձանց ցուցակները, որոնց տարիքը պէտք է որոշվի արտաքին տեսքով՝ դաւառական, շրջանի և քաղաքային ատեաններին, ըստ պատկանելոյն։

ՄԻ ԶԻՆՈՒՈՐԱԿՈՉԱԿԱՆ ԲԱԺԻՆԻՑ ՄԻՒՍ ԲԱԺԻՆ ՏԵՂԱՓՈԽՎԵԼԸ։

Յօդ. 119. Այն բոլոր անձինք, որոնք պէտք ենթարկվեն զինուորական ծառայութեան, իրաւունք ունեն ներկայանալ զինուորակոչին կամ այն բաժիններում, որոնց վերայ նոքա գրված են, կամ թէ այն բաժիններում, որոնց մէջ իրանք կամ իրանց ծնողները ունեն անշարժ սեփականութիւն, և կամ որոնց մէջ բնակութիւն են հաստատել ոչ պակաս քան երեք ամիս առաջ այն օրից, երբ յայտարարութիւն են տուել զինուորակոչին ներկայանալու բաժնի ընտրութեան մասին։

Այն անձինք, որոնք կամենում են զինուորական ծառայութիւնը կատարել ոչ թէ այն բաժնում, որի վերայ գրվածեն, այլ մի ուրիշ բաժնում, պարտաւորեն այդ մասին յայտարարել՝ ներկայացնելով իրանց իրաւունքը հաստատող վկայականներ Զինուորագրական Կանոնադրութեան 119-երորդ յօդուածի հիման վերայ, ոչ ուշ քան մայիսի 1-ը այն տարուայ, երբ ենթարկվումեն զինուորակոչին։ Գիւղական բնակիչները, մեշչանները և արհեստաւորները այդ մասին պէտք է յայտարարեն թէ իրանց ընտրած նոր բաժնի և թէ այն բաժնի գիւղական և քաղաքային վարչութիւններին, որի վերայ իրանք գրված են. իսկ միւս դասակարգերին պատկանող անձինք պէտք է յայտարարեն թէ մէկ և թէ միւս բաժնի տեղական ոստիկանութիւններին (Կովկ. զին. կան. յօդ. III, 25)։

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Յօդ. 123. Այն անձինք, որոնք կամենում են յետաձգում ստանալ ուսումը աւարտելու համար, յայտարարում են այդ մասին իրանց դաւառական, շրջանի կամ քաղաքային զինուորագրական ատեանին, ներկայացնելով դրա հետ մասին ուսումը շարունակելու վկայական այն ուսումնարանական հիմնարկութեան վարչութիւնից, որի մէջ յայտարարողը ուսանում է, բացատրելով թէ արդեօք զինուորական ծառայութիւնը վիճակով է ուզում կատարել, թէ իբրև կամաւոր։

Յօդ. 125. Թէ 123-երորդ յօդուածի մէջ յիշատակված անձինք և թէ նոքա, որոնք կամենում են օգտվել իրանց կարողութեան վերաբերեալ արտօնութիւններով, պէտք է

այդ մասին յայտարարեն զինուորագրական ատեանին ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, մինչև զինուորակոչի ժամանակի հասնելը։ Այդ ժամանակը անցկացնելուց յետոյ յայտարարութիւնները կ'ընդունվեն միայն այն դէպքում, երբ յայտարարողը կը ներկայացնի ժամանակը անցկացնելու վերաբերութեամբ յարգելի պատճառներ։

Յօդ. 126. Այն անձինք, որոնք իրաւունք ունեն զինուորական ծառայութիւնից ազատ մնալու ընդհանրապէս, կամ միայն խաղաղութեան ժամանակի ծառայութիւնից, այլ և նոքա, որոնք իրաւունք ունեն խսկական ծառայութեան մէջ պակասեցրած ժամանակով մնալու, ներկայացնում են իրանց գաւառական, շրջանի կամ քաղաքային զինուորագրական ատեանին՝ առաջինները,—սահմանված վկայականը իրանց կոչման կամ պարապմունքի վերաբերութեամբ, որը իրաւունք է տալիս ազատ մնալու զինուորական ծառայութիւնից, կամ միայն խաղաղութեան ժամանակի ծառայութիւնից, իսկ երկրորդները,—գիտնական կամ պետական պաշտօնավարութեան աստիճանի դիպլօմը կամ ատեստատը, և կամ վկայական ուսումնարանական վարչութիւնից՝ թէ ուսումը աւարտել և կամ համապատասխան քննութիւն են բռնել։

ԶԻՆՈՒՈՐԱԿՈՉԻ ՄԱՍԻՆ։

Յօդ. 129. Մասնաւոր զինուորակոչական ցուցակները ստուգելուց յետոյ՝ գաւառական, շրջանի և քաղաքային զինուորագրական ատեանները այդ ցուցակներից կազմումեն բաժնի ընդհանուր ցուցակներ, ամէն մի զինուորակոչական բաժնի համար առանձին առանձին։

Յօդ. 130. Կազմելով բաժնի ցուցակները՝ գաւառական, շրջանի և քաղաքային զինուորագրական ատեանները, մինչև

յուլիսի 1-ը, նահանգական կամ վիճակային զինուորագրական ատեանների միջոցով ներկայացնում են զինուորական և ներքին գործերի Մինիստրութիւններին տեղեկութիւններ՝ իւրաքանչիւր բաժնի զինուորակոչական ցուցակի մէջ մտցրած մարդոց թւի մասին։

Անդրկովկասի բնակիչների և Թերէքի ու Կուբանի վիճակների այլազգիների թւի վերաբերութեամբ՝ զինուորակոչական ցուցակների մէջ մտցրած տեղեկութիւնները ներկայացնվում են Կովկասեան զինուորական շրջանի զօրքերի հրամանատարին (Կովկ. զին. կան. յօդ. VI, 8)։

Երբ Կովկասեան զինուորական շրջանի զօրքերի հրամանատարը ստանումէ նախորդ յօդուածում յիշատակված տեղեկութիւնները, շրջանի շտաբը դասաւորումէ տարեկան ընդհանուր զինուորակոչը (յօդ. 1) Թերէքի և Կուբանի վիճակների, Անդրկովկասի նահանգների և Զաքաթալի շրջանի մէջ՝ այն անձանց թւի համեմատ, որոնք մտցրված են այդ վիճակների, նահանգների և շրջանի զինուորակոչական ցուցակների մէջ։ Այդ դասաւորութիւնը հաստատվումէ Կովկասեան զինուորական շրջանի զօրքերի հրամանատարի կողմից և ապա ուղարկվումէ նորա ձեռքով զինուորական և ներքին գործերի Մինիստրներին, հաղորդվումէ նահանգական (վիճակային) զինուորագրական ատեաններին, և յայտարարվումէ 'ի գիտութիւն ընդհանրութեան (Կովկ. զին. կան. յօդ. IV, 9)։

Յօդ. 132. Տարեկան զինուորակոչը իւրաքանչիւր նահանգի կամ վիճակի զինուորակոչական բաժինների վերայ դասաւորելը կատարվում է նահանգական կամ վիճակային զինուորագրական ատեանի ձեռքով, այն անձանց թւի համեմատ, որոնք մտցրված են բաժինների զինուորակոչական ցուցակների մէջ (յօդ. 130)։

Յօդ. 134. Մինչև զինուորակոչի ժամանակի հաս-

նելը՝ գաւառական, շրջանի և քաղաքային ատեանները բաժիններում նշանակումեն զինուորակոչական օրեր և կարգադրում են, որ կանչվեն իւրաքանչիւր բաժնի կոչնատեղին, որոշված օրը, ինչպէս այն բոլոր անձինք, որոնք մտցրվածեն զինուորակոչական ցուցակների մէջ (բացի հետևեալ 135-երորդ յօդուածում յիշատակվածներից), նոյնպէս և այն անձինք, որոնց տարիքը պէտք է որոշվի արտաքին տեսքով։

Յօդ. 135. Կոչնատեղին ներկայանալու համար չեն կանչվում.

1) Այն անձինք, որոնք զինուորակոչական ցուցակների մէջ մտցնվելուց յետոյ քրիստոնէական դաւանութիւնների հոգևորական կոչում են ստացել։

2) Այն անձինք, որոնք ստացել են յետաձգումներ՝ ա) կրթութեան վերաբերութեամբ (յօդ. 52), բ) ուսումը աւարտելու համար (յօդ. 53)։

3) Այն անձինք, որոնք օգտվում են առաջին կարգի արտօնութեամբ, բացի այն դէպքերից, երբ այդպիսիներին զօրքի մէջ ծառայութեան կանչելու համար կը կայանայ, 152-երորդ յօդուածի հիման վերայ, Պետական խորհրդի Բարձրագոյն հաստատված առանձին կարծիքը։

Յօդ. 136. Զինուորակոչին չը ներկայանալու օրինական պատճառ կարող են համարվել վտանգաւոր և ծանր հիւանդութիւնը և ուրիշ անդիմադրելի արգելքներ, որոնք պէտք է ապացուցվեն ըստ արժանւոյն։ Հիւանդութեան ապացոյց համարվում է բժշկի և ոստիկանութեան վկայականը, իսկ եթէ հիւանդի գտնված տեղը բժիշկ չը կայ, տեղական քահանայի և հաշտարար դատաւորի կամ վոլոստի ստարշինի վկայութիւնը։

Այնտեղերում, որտեղ չեն հիմնված վոլոստի վարչութիւններ, զինուորակոչին ներկայ գտնվելուն արգելք եղող

հիւանդութիւնը վաւերացնվումէ գիւղական տանուտէրյականով, որը հաստատված պէտք լինի տեղական նութեան կողմից (Կովկ. զին. կան. յօդ. III, 26)։

Յօդ. 138. Արտաքին տեսքին նայելով տարիքը որոշում է գաւառական, շրջանի կամ քաղաքային ատեանը իր բոլոր անդամների ներկայութեամբ, ձայների մեծամասնութեամբ։ Տարաձայնութիւններ պատահած դէպքում՝ որոշումները ներկայացնվում են նահանգական կամ վիճակային ատեանի քննութեան և հաստատութեանը։ Նահանգական կամ վիճակային ատեանը կարող է երկրորդ անգամ զննել պատկանեալ անձին՝ եթէ այդ անհրաժեշտ կը համարի։

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՎՈՂ ԱՆՁԻՆՔ։

Յօդ. 140. Զինուորակոչական ցուցակը լրացնելուց յետոյ, գաւառական, շրջանի կամ քաղաքային ատեանը այդ ցուցակով ստուգում է զինուորակոչին ներկայացած անձինքներին, կարգալով ի լուր ամենեցուն, թէ յիշեալ ցուցակները և թէ դոցա մէջ մտցրված բոլոր նկատողութիւնները այն մասին, թէ կանչվածներից ո՞ւմ ինչ արտօնութիւն է տրվում և ինչ հիման վերայ։ Բոլոր կանչվածները և կողմնակի անձինք իրաւունք ունեն ընդդիմաբանելու այդ նկատողութիւնների ըստուգութեան դէմ, և եթէ ատեանը այդ ընդդիմաբանութիւնները արդարացի կը համարի, այն ժամանակ պէտք է մտցնի ցուցակի մէջ հարկաւոր փոփոխութիւնները։ Դրանից յետոյ տեղի է ունենում վիճակահանութիւնը, որին ենթարկվում են այն բոլոր անձինք, որոնք մտցրված են բաժնի զինուորակոչական ցուցակի մէջ, բացի քրիստոնէական դաւանութիւնների հոգևորական կոչում ստացած անձինքներից։

Կովկասեան առաջին զինուորակոչի այն նորակոչ զի-

նուորները, որոնք կ'ապացուցանեն թէև նոյն իսկ վիճակ հանելուց յետոյ՝ ընտանեկան դրութեան արտօնութիւն ստանալու իրանց իրաւունքը, եթէ միայն այդ մասին յայտարարել են նախ քան վիճակարկութիւնը, կ'արձակվեն իսկական ծառայութիւնից և կը մտցնվեն պահեստի մէջ (Կովկ. զին. կան. յօդ. IV, 11)։

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ։

Յօդ. 141. Վիճակահանութեան սկզբում նախագահողը ստուգում է թուահամարներով նշանակած տոմսակների թիւը համեմատելով զինուորական ցուցակի մէջ մտցրվածների թվի հետ և դնում է բոլոր տոմսակների վերայ մի որև իցէ նշան։ Ապա նախագահի հսկողութեան ներքոյ տոմսակները ծալվում են, խառնվում և ածվում մի առանձին արկղի մէջ։ Վիճակահանութեան կանչվածներին թոյլ է տրվում իրանց միջից ընտրել մի հաւատարմատար՝ ծալած տոմսակները արկղի մէջ ածելուց առաջ կրկին անգամ համրելու և կրկին անգամ խառնելու համար։

Յօդ. 142. Վիճակ հանելու համար զինուորակոչին ենթարկվողները կանչվումեն այն հերթով, ինչ հերթով որ մտցրված են մասնաւոր զինուորակոչական ցուցակների մէջ. կանչվածներից իւրաքանչիւրը իր համար հանումէ վիճակի մի թուահամար. բացակայ եղողների փոխարէն թուահամարը հանումեն կամ նոցա ներկայ եղող ազգականները, կամ ատեանի նախագահը, կամ քաղաքային վարչութիւնների անդամները, և կամ թէ վոլոստի ստարշինաները։ Ատեանի անդամներից մէկը կարդումէ 'ի լուր ամենեցուն թուահամարը, և դորա հետ միասին, մարդու անունը և զինուորակոչական ցուցակի մէջ նշանակված նրա թուահամարը. ապա այդ տրվում է ատեանի անդամներին

ստուգելու և ինչպէս տոմսակի վերայ, նոյնպէս և զինուորակոչական ցուցակում նշան անելու համար։ Միևնոյն ժամանակ վիճակ հանողի անունը և զինուորակոչական ցուցակի նրա թուահամարը գրվումեն վիճակահանութեան ցուցակի մէջ. դրանից յետոյ տոմսակը թուահամարով յանձնվումէ հանողին անդարձ կերպով։

Յօդ. 143. Վիճակահանութիւնը, եթէ կարելի է լինում, վերջացնվում է մի օրում, իսկ հակառակ դէպքում շարունակվումէ օր օրի ետևից մինչև վերջացնելը։ Այդ ժամանակ 'ի նկատի են առնվում հետևեալ կանոնները.

1) Արկղը տեղաւորվում է մի աչքի ընկնող տեղում։

2) Վիճակի թուահամարները հանվումեն արկղից հրապարակաւ։

3) Վիճակ հանողը ձեռքը արկղի մէջ կոխելուց առաջ պէտք է մերկացնի մինչև արմունկը և ցոյց տայ բաց ձեռքը ներկայ եղողներին։

4) Ոչ ոք բացի վիճակ հանողից չը պէտքէ դիպչի արկղին։

5) Իւրաքանչիւր մարդ միայն մի անգամ է վիճակ հանում։ Վիճակ հանողը կատարումէ ծառայութիւնը իրան ընկած թուահամարի համաձայն, եթէ մինչև անգամ նա, որևէ տարակուսութեան պատճառով, թուահամարը իր հերթից առաջ է հանել։

6) Եթէ վիճակահանութիւնը չը վերջանայ մի օրուայ ընթացքում, այն ժամանակ արկղը մէջը մնացած թուահամարների հետ միասին պահվում է մինչև միւս օրը, և այդ էլ ոչ ուրիշ կերպ, եթէ ոչ ատեանի բոլոր անդամների կնիքով և դոցա կողմից նշանակված առանձին պահապանի հսկողութեան ներքոյ։

ՁՆՆԵԼՈՒ ԵՒ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԻՋ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ։

Յօդ. 144. Վիճակահանութիւնից յետոյ գաւառական, շրջանի կամ քաղաքային ատեանը սկսումէ զննութեան ենթարկել զինուորական ծառայութեան կանչված անձանց և պիտանի համարվողներին ծառայութեան մէջ ընդունել։ Զննութեան ժամանակ, ատեանի նախագահի հայեցողութեամբ, կարող են ներկայ լինել և կողմնակի անձինք։

Յօդ. 145. Զննութեան ենթարկվելուց ազատվումեն նոքա, որոնք ներկայացնում են պետական ծառայութեան մէջ գտնվող բժշկի վկայութիւնը այն մասին, թէ իրանց ոչ մարմնի կազմուածքի մէջ, և ոչ էլ առողջութեան մէջ ոչինչ այնպիսի պակասութիւններ չը կան, որոնք կարողանային արգելք լինել զինուորական ծառայութեան մէջ ընդունվելուն։

Յօդ. 146. Վիճակահանութեան ցուցակի թուահամարների հերթով զննութեան են ենթարկվում նոքա, որոնք ընտանեկան դրութեան արտօնութիւններ չ'ունեն։ Այն դէպքում, երբ այդ անձինք բաւական չեն լինիլ բաժնից պահանջվող նորակոչ զինուորների թիւը լրացնելու համար, զննութեան կը ենթարկվեն նոյն կարգով և այն անձինք, որոնք ունեն ընտանեկան դրութեան երրորդ կարգի արտօնութիւն, դոցանից յետոյ երկրորդ կարգինը, և վերջապէս առաջին կարգինը, մինչև որ կը լրանայ բաժնից պահանջվող նորակոչ զինուորների թիւը։

Յօդ. 147. Վիճակահանութեան մէջ մասնակցած այն անձինք, որոնք քննութեան կամ դատաստանի տակ են գտնվում, ենթարկվում են զննութեան և նշանակվում են ծառայութեան մէջ, առաջինները՝—այն ժամանակ, երբ քննութիւնը վերջացել է և նոքա չը պէտք է ենթարկվեն դատաստանի. իսկ երկրորդները՝—այն ժամանակ, երբ արդէն նոցա վերաբերութեամբ գործադրվել է դատաստանական վճիռը, եթէ միայն այդ վճիռը չէ զրկում նրանց կացութեան բոլոր իրաւունքներից, կամ այն բոլոր առանձնակի իրաւունքներից և արտօնութիւններից, որ ձեռք են բերել անձամբ և ըստ կացութեան։

Յօդ. 148. Եթէ զննութեան ժամանակ ոմանք յայտարարում են թէ իրանք ունեն ընկնոտութիւն կամ մի ուրիշ ծածկված հիւանդութիւն, որը արգելումէ կատարել զինուորական ծառայութիւնը, այն ժամանակ ատեանը դէպի այդ տեսակ յայտարարութիւնը կասկած ունեցած դէպքում, ուղարկում է այդպիսիներին մօտիկ հիւանդանոցը, որպէս զի փորձով հաստատվի, թէ արդեօք պիտանի են նոքա զինուորական ծառայութեան համար, թէ ոչ։ Ատեանը այդպէս է վարվում և այն դէպքում, երբ բժիշկների եզրակացութեամբ՝ հիմք կայ ենթադրելու, թէ այն հիւանդութիւնը, որը արգելումէ զինուորական ծառայութեան մէջ ընդունելուն, առաջ է բերված և շարունակվումէ արուեստական կերպով։ Հիւանդանոց ուղարկվածների ապրուստը՝ նոցա փորձի ենթարկած ժամանակամիջոցում, հոգում է դանձարանը, եթէ միայն նոքա իրանք չեն ցանկանայ հիւանդանոցում իրանց հաշուով ապրել։

Յօդ. 152. Այն անձինք, որոնք պիտանի են համարվել զինուորական ծառայութեան համար և մտել են բաժնից պահանջվող նորակոչ զինուորների թիւի մէջ, համարվում են ծառայութեան մէջ ընդունված և անյապաղ մտցնվում են ընդունելութեան ցուցակի մէջ։ Բայց ընտանեկան դրութեան առաջի կարգի արտօնութեան իրաւունք ունեցողները մտցնվում են ընդունելութեան ցուցակի մէջ միմիայն այն դէպքում, երբ նոցա ծառայութեան մէջ մտցնելու համար կը կայանայ, Զինուորական Մինիստրի առաջարկութեամբ, Պետական Խորհրդի Բարձրագոյն հաստատված առանձին կարգիքը։

Յօդ. 154. Մշտական զօրքի մէջ մտցնվողների ընդունե-

լութիւնը վերջացնելուց յետոյ, գաւառական, շրջանի կամ քաղաքային ատեանը հանրաղօրքի մէջ է մտցնում, վիճակահանութեան ցուցակի կարգով, միւս բոլոր այն անձանց, որոնք կանչված են եղել զինուորական ծառայութիւն կատարելու, բացի նոցանից, որոնք՝ արտաքին տեսքին նայելով՝ զէնք կրելու անընդունակ են համարվել:

Յօդ. 155. Գաւառական, շրջանի կամ քաղաքային ատեանի գործողութիւնը բաժինների զինուորակոչի և ընդունելութեան վերաբերութեամբ աւարտվում է նրանով, որ կարդում են 'ի լուր ամենեցուն մշտական զօրքի ծառայութեան մէջ ընդունվածների անուանացուցակը, և ընդունվածներին ենթարկում են երդումի: Մշտական զօրքի մէջ ընդունված անձինք կարող են ժամանակաւոր արձակուրդ ստանալ նահանգական կամ վիճակային զինուորագրական ատեանի կարգադրութեամբ՝ իրանց տները գնալու համար: Արձակուրդ ստացող նորակոչ զինուորներին յայտնվումէ թէ երբ պէտքէ ներկայանան ծառայութեան մէջ մտնելու համար, յայտնվումէ նոյնպէս և տեղը, ուր նոքա պէտքէ գան, այն նահանգում, որի մէջ նոքա ընդունվել են:

ԶԻՆՈՒՈՐԱԿՈՉԱԿԱՆ ՅՈՒՅԱԿՆԵՐԻ ՄԻՋ ՉԸ ՄՏՑՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ:

Յօդ. 158. Եթէ զինուորակոչական հասակին (յօդ. 11) հասածներից մէկը մտցրված չի լինել զինուորակոչական ցուցակի մէջ և ինքը չի յայտարարել այդ մասին մինչև իր հասակակիցների (յօդ. 142) վիճակահանութեան օրը, նա կը զրկվի վիճակ հանելու իրաւունքից, և կը մտցնվի ծառայութեան մէջ, եթէ դորա համար պիտանի կը լինի: Այս կանոնը չի գործադրվում այն անձանց վերաբերութեամբ, որոնք կը ներկայացնեն՝ գաւառական, շրջանի կամ քաղաքային ատեանի կարգադրութեամբ յարգելի ապացոյցներ այն մասին, որ զինուորակոչական ցուցակի մէջ նրանց չը մտցնելը առաջ է եկել առանց որևէ զանցառութեան իրանց կողմից: Ատեանը այդպիսի անձանց թոյլ է տալիս առանձին վիճակ հանել (յօդ. 159), եթէ նոքա ծառայութեան համար պիտանի կը համարվեն:

Եթէ զինուորակոչական հասակին հասածներից մէկը իմանալով որ ինքը հասել է այդ հասակին՝ մտցրված չի լինել զինուորակոչական ցուցակների մէջ, կը զրկվի վիճակ հանելու իրաւունքից ու դորա հետ միասին բոլոր արտօնութիւնների իրաւունքից:

Յօդ. 159. Առանձին վիճակահանութեան ենթարկվող անձի կամ անձանց համար, արկղի մէջ ածվումէ այնքան տոմսակ, որքան որ ածված է եղել համապատասխան բաժնում նոցա բոլոր հասակակիցների համար (յօդ. 141): Ով կը հանի այնպիսի թուահամար, որը հաւասար կամ աւելի փոքր կը լինի այն թուահամարից, որով աւարտված է եղել մշտական զօրքի (յօդ. 146) համար կատարվող ընդունելութիւնը, այդպիսին կը նշանակվի մշտական զօրքի մէջ. իսկ դրանից աւելի մեծ թուահամար հանողը կը հաշվի հանրաղօրքի մէջ (յօդ. 154): Յամենայն դէպս վիճակ հանողի անունը և վիճակի թուահամարը գրվումէ վիճակահանութեան ցուցակի վերջում, իսկ տոմսակի վրա անվումէ հետևեալ նկատողութիւնը՝ «լրացուցիչ վիճակ»:

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԸ:

Յօդ. 160. Վիճակահանութեանը մասնակցած, բայց մշտական զօրքի ծառայութեան մէջ չը մտած իւրաքանչիւր մարդուն տրվումէ վկայական՝ զինուորական ծառայութեանը ներկայացած լինելու մասին,—այսպէս.

1) Ծառայութեան համար կատարելապէս անընդունակ

համարվածին տրվումէ անորոշ ժամանակի վկայական, ծառայութիւնից նրան մշտապէս ազատ կացուցանելու համար։

2) Հանրազօրքի ռազմիկների թուի մէջ մտցրվածին տրրվում է անորոշ ժամանակի վկայական այդ մասին, նշանակելով դորա հետ միասին նրա վիճակահանութեան թուահամարը։

3) Այն անձանց, որոնք ծառայութեան մէջ մտնելու համար յետաձգում են ստացել, այլ և կրկնաղննութեան ենթարկվողներին, փորձելու համար հիւանդանոցները ուղարկվածներին, և քննութեան ու դատաստանի տակ գտնվողներին տրվում են ժամանակաւոր վկայականներ, որոնց մէջ ճշդութեամբ նշանակվումէ թէ ինչով է պայմանաւորվում վկայականի ժամանակամիջոցի վերջանալը։

Յօդ. 162. Ժամանակաւոր վկայական ստացողը (յօդ. 160 կ. 3) պարտաւոր է, այդ վկայականի ժամանակը լրանալուց յետոյ, յայտարարել այդ մասին գաւառական, շրջանի կամ քաղաքային ատեանին, որպէս զի նրանից ցուցմունք ստանայ, թէ երբ և որտեղ պէտք է ներկայանայ զննութեան ենթարկվելու և ծառայութեան մէջ ընդունվելու համար։

Յօդ. 163. Զինուորակոչական հասակից անցած անձինք պէտք է ներկայացնեն թէ զինուորական ծառայութեան ներկայացած լինելու վկայականները (յօդուած 160) և թէ զինուորակոչական բաժնի վերայ գրված լինելու վկայականները այն բոլոր դէպքերում, որոնք յիշատակված են 100-երորդ յօդուածի մէջ։

ԶԻՆՈՒՈՐԱԿՈՉԻ ԵՒ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԾԱԽՔԵՐԸ։

Յօդ. 167. Գաւառական, շրջանի և քաղաքային ատեանները զետեղվումեն արքունական և հասարակական շինու-

թիւնների մէջ։ Այն դէպքում, երբ այդ շինութիւնների մէջ չը կայ ազատ կամ յարմար տեղ, նոր բնակարան վարձելու, այլ և այդ բնակարանը կահաւորելու, տաքացնելու և լուսաւորելու ծախքերը դրվումեն նահանգական զեմստվոյի ընդհանուր տուրքի վերայ (Տես. Կով. զին. կան. III, 28)։

Յօդ. 169. Զինուորական ծառայութիւնը կատարելու կանչվող անձինք, պարտաւոր են ներկայանալ իրանց բաժինների կոչնատեղը կարգին հագուստով ու ոտնամանով, և մինչև ծառայութեան մէջ ընդունվելու ժամանակը պէտք է ապրեն իրանց հաշուով։

Յօդ. 170. Մշտական զօրքի ծառայութեան մէջ ընդունվածներին արքունական հաշուով պահելը սկսվումէ այն օրից, երբ նոքա ներկայացել են հաւաքվելու համար նշանակած տեղը (յօդ. 155). իսկ նորակոչ զինուորներից նոքա, որոնք կոչնատեղից կը գնան զօրքի մէջ մտնելու, արքունական հաշուով կ'ապրեն ծառայութեան մէջ ընդունվելու օրից սկսած։

ԿԱՄԱՒՈՐՆԵՐ։

Յօդ. 171. Այն անձինք, որոնք կամենում են մտնել ցամաքային զօրքի մէջ իբրև կամաւորներ, պէտք է համապատասխանեն հետևեալ պայմաններին.

1) Նոքա տասն և եօթ տարեկանից պակաս չը պէտք է լինեն և անչափահասութեան դէպքում պարտաւոր են ներկայացնել հաստատութիւն իրանց ծնողների, խնամակալների և կամ հոգաբարձուների համաձայնութեան մասին՝ ծառայութեան մէջ իբրև կամաւոր մտնելու վերաբերութեամբ։

2) Նոքա իրանց առողջութեամբ և մարմնի կազմուածքով պէտք է համապատասխանեն այն պայմաններին, որոնք սահ-

մանված են զինուորական ծառայութեան մէջ ընդունելու համար։

3) Նոքա պէտք է ներկայացնեն սահմանված վկայականը այն մասին, թէ առաջին երկու կարգի ուսմնարանական հիմնարկութիւններից մէկի լիակատար դասընթացի, և կամ թէ գիմնազիաների կամ ռեալական դպրոցների վեցերորդ դասատան, կամ հոգևոր սեմինարեաների երկրորդ դասատան քննութիւն են բռնել, և կամ թէ քննութիւն են տուել այն ծրագրի համաձայն, որը սահմանված է զինուորական և ժողովրդական լուսաւորութեան Մինիստրների փոխադարձ համաձայնութեամբ (Տես յօդ. 56, կ. 2)։

Պետական խորհուրդը 1886 թ. Փետրվարի 10-ի բարձրագոյն հաստատված կարծիքով սահմանեց.—կամաւորները, իրանց ստացած կրթութեան համեմատ, բաժանվում են երկու կարգի *)

Այն կամաւորները, որոնք առաջին կամ երկրորդ կարգի ուսումնարանական հիմնարկութիւններից մէկի դասընթացի քննութիւն են բռնել 171 յօդուածի 3-րորդ կէտի մէջ որոշված չափով, կոչվում են առաջին կարգի կամաւորներ, և պարտաւոր են իսկական ծառայութեան մէջ մնալ մէկ տարի։

Այն կամաւորները, որոնք քննութիւն են բռնել զինուորական և ժողովրդական լուսաւորութեան Մինիստրների համաձայնութեամբ սահմանված ծրագրի համեմատ՝ կոչվում են երկրորդ կարգի կամաւորներ, և պարտաւոր են զօրքի իսկական ծառայութեան մէջ մնալ երկու տարի։

Կամաւորները սահմանված քննութիւնները բռնելուց յետոյ, ստանում են ունտէր-օֆիցերի և օֆիցերի ասոլէնան՝ զօրքի մէջ երբև զինուոր որոշ ժամանակ ծառայելով։

*) Մինչև 1886 թ. Փետրվարի 10-ի օրէնքի հրատարակվելը՝ կամաւորները բաժանվում էին երեք կարգի. այս օրէնքը առաջին երկու կարգի կամաւորների համար նշանակեց ծառայութեան հաւասար ժամանակ, և դրանով կամաւորներին բաժանեց երկու կարգի, այն է՝ առաջին և երկրորդ կարգի կամաւորներ։

Յօդ. 186. Նաւատորմի մէջ իբրև կամաւոր ընդունվում են այն անձինք, որոնք համապատասխանում են կրթութեան այն պայմաններին, որոնք որոշված են ցամաքային զօրքի առաջին և երկրորդ կարգի կամաւորների համար, նոյնպէս և այն պայմաններին, որոնք ցոյց են տուած 171-երորդ յօդուածի 1 և 2 կէտերում։

Յօդ. 187. Նաւատորմի կամաւորները պարտաւոր են մընալ իսկական ծառայութեան մէջ երկու տարի, իսկ պահեստի մէջ՝ հինգ տարի։

ԶԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԳԱՆԳԱՏՆԵՐԸ։

Յօդ. 197. Զինուորագրութիւնը վարող հիմնարկութիւնների գործողութեան և կարգագրութիւնների դէմ, թոյլ է տրվում, յայտնի ժամանակամիջոցի ընթացքում (յօդ. 201, 205 և 211) գանգատ տալ գրաւոր և բանաւոր կերպով։

Յօդ. 199. Գանգատաւորին նորա պահանջի համեմատ, ստորագրութիւն պէտք է տրվի գանգատը ընդունելու մասին։

Յօդ. 201. Այն գանգատները, որոնք տրվում են մասնաւոր զինուորակոչական ցուցակները կազմող հիմնարկութիւնների և պաշտօնատար անձանց դէմ՝ այդ ցուցակների մէջ մտցրված անճշտութիւնների մասին, պէտք է ներկայացվեն երկու շաբաթվայ ընթացքում, հաշուելով՝ մասնաւոր զինուորակոչական ցուցակները ներկայացնելու համար 118-երորդ յօդուածում որոշված վերջնական ժամանակամիջոցի օրից։

Յօդ. 202. Նախորդ (201) յօդուածում յիշատակված գան-

դատները կարելի է տալ կամ ուղղակի գաւառական, շրջանի կամ քաղաքային զինուորագրական ատեանին, և կամ թէ մասնաւոր զինուորակոչական ցուցակները կազմող հիմնարկութիւններին կամ անձանց, որոնք պարտաւոր են անյապաղ այդ դանդատները հասցնել նշանակած տեղը։

Յօդ. 204. Դանդատի վերաբերեալ վճիռը պէտք կայացնվի երկու շաբաթուայ ընթացքում, հաշուելով այն օրից երբ դանդատը քննվել է ատեանում և վճիռը պէտք է յայտնվի դանդատաւորին երեք օրուայ ընթացքում։ Դանդատաւորին իւր պահանջի համեմատ՝ տրվում է արձանագրութեան պատճէնը։

Յօդ. 205. Գաւառական, շրջանի և քաղաքային ատեանների դէմ տրվող դանդատները,—թէ զինուորակոչական ցուցակների անճշտութիւնների վերաբերմամբ, թէ արտօնութիւններ նշանակելու և թէ արտաքին տեսքով տարիքը որոշելու, և ծառայութեան պիտանի լինելու վերաբերմամբ,—ներկայացնվում են նահանգական կամ վիճակային զինուորագրական ատեաններին չորս շաբաթուայ ընթացքում, հաշուելով վճիռը յայտնելու օրից։

Յօդ. 208. Նահանգական կամ վիճակի զինուորագրական ատեանը պարտաւոր է վերաքննել իւրաքանչիւր այն անձին, որը դանդատ է ներկայացնում իրան անկանոն զննած լինելու մասին՝ զինուորական ծառայութեան համար պիտանի լինելու, կամ արտաքին տեսքով հասակը որոշելու վերաբերութեամբ։ Ուրիշ անձանց դանդատների վերաբերութեամբ վերաքննութիւնը կը կատարվի միայն այն դէպքում, երբ ատեանը այդ անհրաժեշտ կը համարի։

Յօդ. 209. Նահանգական կամ վիճակային զինուորագրական ատեանների կայացրած վճիռները իրանց ներկայացրված դան-

դատների վերաբերութեամբ, յայտարարվում են դանդատաւորներին եօթն օրուայ ընթացքում, հաշուելով վճիռը կայացնելու օրից։

Յօդ. 210. Զինուորակոչական ցուցակների մէջ մտցրած ցուցմունքների անճշտութեան և արտաքին տեսքով տարիքը սխալ որոշելու դէմ տուած դանդատների համար՝ նահանգական կամ վիճակային ատեանի կայացրած վճիռները համարվում են վերջնական և նոր դանդատի չեն ենթարկվում։

Յօդ. 211. Արտօնութիւններ նշանակելու անճշտութիւնների և կամ զինուորական ծառայութեան համար պիտանի լինելը որոշող զննութեան անճշտութիւնների համար տուած դանդատների մասին՝ նահանգական կամ վիճակային ատեանների կայացրած վճիռների դէմ թոյլ է տրվում դանդատ ներկայացնել Կառավարիչ Սենատին (առաջին դէպարտամենտ) երկու ամսուայ ընթացքում, հաշուելով վճիռը յայտնելու օրից։

ԶԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ՕՐԻՆՔՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՊԱՏԻԺՆԵՐԸ։

Յօդ. 212. Այն անձինք, որոնք պարտաւոր են գրվել զինուորակոչական բաժինների վերայ (յօդ. 97), այն դէպքում, երբ այդ պարտաւորութիւնը չեն կատարում մինչև այն տարուայ վերջը, երբ իրանց քսան տարին լրանում է, ենթարկվումեն պատժական կանոնադրութեան 506-երորդ յօդուածի 1 կէտի մէջ ցոյց տուած պատժին (այն է, դրամական տուգանքի, ոչ աւելի քան հարիւր ռուբլի)։

Յօդ. 213. Իրանց սեփական մեղաւորութեամբ զինուորակոչական ցուցակի մէջ չը մտցրվածները, որոնք այդ պատճառով, 158-երորդ յօդուածի համեմատ պէտք մտցնվեն զինուորական ծառայութեան մէջ զրկվելով վիճակահանութեան իրաւունքից, ենթարկվում են պատժական կանոնադրութեան 506-երորդ

յօդուածի 2 կէտի մէջ որոշված պատժին (այն է, բանտարկութեան երկուսից մինչև չորս ամիս ժամանակով, կամ կալանաւորութեան՝ ոչ աւելի քան երեք ամսով),-եթէ միայն ծառայութեան համար անընդունակ կը համարվեն, սակայն ոչ թէ այն դէպքում, երբ անընդունակութիւնը առաջ է եկել իրանց անդամները դիտմամբ վնասելուց (յօդ. 218)։

Յօդ. 215. Նոքա, որոնք զննութեան ժամանակ յայտարարել են, թէ ունեն որևիցէ ծածկված հիւանդութիւն, որը արգելումէ զինուորական ծառայութեան մէջ մտնել, այն դէպքում, երբ հիւանդանոցի մէջ փորձի ենթարկելուց յետոյ կ'երևայ որ նոցա ցուցմունքը սուտ է եղել, կ'ենթարկվեն՝ ծառայութեան մէջ մտցնվելուց յետոյ՝ պատժական կանոնադրութեան 506-երորդ յօդուածի 4 կէտի մէջ ցոյց տուած պատժին։

Յօդ. 216. Մշտական զօրքի մէջ ընդունվածները (յօդ. 155), կամ նոքա, որոնք իրանց հանած վիճակի թուահամարի համեմատ պարտաւոր են մտնել ծառայութեան մէջ, այն դէպքում, երբ որոշած ժամանակին չեն ներկայանում ծառայութեան առանց յարգելի պատճառների, ենթարկվում են զինուորական պատժական կանոնադրութեան 140-երորդ յօդուածի մէջ որոշված պատիժներին։

Յօդ. 217. Նա, ով որ ցանկանալով խոյս տալ զինուորական ծառայութիւնից, կամ ցանկանալով ծառայութեան ժամանակ օգտվել իրան չը տուած արտօնութիւններից, գործ կը դնի որևիցէ խաբեբայական գործողութիւններ, զինուորական ծառայութեան մէջ մտցնվելուց յետոյ՝ կ'ենթարկվի միակեաց բանտարկութեան զինուորական բանդում, երեքից մինչև չորս ամիս ժամանակով։

Յօդ. 218. Նախորդ (յօդ. 217) յօդուածում որոշված պատժին՝ նոյնպէս զինուորական ծառայութեան մէջ մտցնվելուց յետոյ՝ ենթարկվում են և նոքա, որոնք, ցանկանալով խոյս տալ

զինուորական ծառայութիւնից, իրանք կամ ուրիշների աջակցութեամբ՝ հաշմեցնում են իրանց, առաջ են բերում իրանց մարմնի վերայ վէրքեր, կամ մի որևէ ուրիշ միջոցով վնասում են իրանց առողջութեանը։

Անդամավնաս է համարվում միայն նա, որի մասին դատարանը այդպիսի վճիռ է կայացնում։

Յօդ. 219. Նշանակած ժամանակին (յօդ. 260) չը ներկայացած և այդ պատճառով իրանց հասակակիցների ընդունելութեան համար որոշած ժամանակից ուշ ընդունված մարդոց ծառայութեան ժամանակամիջոցը հաշվում է հետևեալ կերպով.—այն անձանց համար, որոնք ընդունվել են առաջին կիսամեակի ընթացքում, ծառայութեան ժամանակը հաշվում է նոյն տարուայ յուլիսի մէկից, իսկ երկրորդ կիսամեակի մէջ ընդունվածների համար՝—դոցա զօրքի մէջ մտնելու յաջորդ տարուայ յունվարի մէկից։

Յօդ. 220. Վերևի 216 և 217 յօդուածներում յիշատակված անձինք, այն դէպքում, երբ զինուորական ծառայութեան համար անընդունակ են դառնում, կամ երբ կը յայտնվեն միմիայն երեսուն և չորս տարեկան դառնալուց յետոյ, ենթարկվում են՝ պատժական կանոնադրութեան 506 յօդուածի 8-երորդ կէտում որոշված պատժին (այն է բանտարկութեան՝ ա. 216 յօդուածինը՝ չորսից մինչև ութ ամիս ժամանակով. և բ. 217 յօդուածինը՝ ութ ամսից մինչև մէկ տարի և չորս ամիս ժամանակով)։

Յօդ. 221. Նոքա, որոնք մեղադրվում են ուրիշին, նորա ցանկութեամբ կամ նորա համաձայնութեամբ, դիտմամբ հաշմեցնելու մէջ՝ որպէս զի նրա ծառայութեան մէջ ընդունվելը արգելեն, և առհասարակ անդամավնասներին աջակցելու մէջ մեղադրվողները ենթարկվում են պատժական կանոնադրութեան 506 յօդուածի 9-երորդ կէտի մէջ որոշված պատժին (այն է, բանտարկութեան ութ ամսից մինչև մի տարի ու չորս ամիս

ժամանակով)։ Իսկ նոքա, որոնք հաշմեցրել են ուրիշին նոյն մտադրութեամբ, բայց առանց նրա ցանկութեան կամ համաձայնութեան, ենթարկվում են օրէնքով որոշած պատժին (այն է, զրկել կացութեան բոլոր իրաւունքներից և աքսորել չորսից մինչև վեց տարի ժամանակով տաժանակիր աշխատանքներ կրելու, և կամ կացութեան բոլոր իրաւունքներից զրկելուց յետոյ՝ Սիբիր աքսորել)։

Յօդ. 223. Այն անձինք, որոնք դրդում են խոյս տալ սոյն կանոնադրութեամբ որոշված պարտաւորութիւններից, այլ և նոքա, որոնք նպաստում և ծածկում են զինուորական ծառայութիւնից խոյս տուողներին, ենթարկվում են պատժի՝ չարագործութիւնների մէջ մասնակցելու վերաբերեալ ընդհանուր կանոնների հիման վերայ, գործադրելով այդպիսիների վերաբերութեամբ, յամենայն դէպս, վերևում յիշատակված այն պատիժները, որոնք չեն կապված զինուորական ծառայութեան մէջ մտցնելու հետ։

Յօդ. 224. Զինուորական ծառայութիւնից խոյս տուած անձանց վերայ չի տարածվում վաղեմութեան (դավնոստ) վերաբերեալ ընդհանուր որոշումների զօրութիւնը։

ԿՈՎԿԱՍԻ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Պետական Խորհուրդը՝ օրէնքների ու պետական տնտեսութեան միացած դեպարտամենտներում և ընդհանուր ժողովում քննելով Զինուորական Մինիստրի առաջադրութիւնը՝ Անդրկովկասի ազգաբնակութիւնը և Թերէքի ու Կուբանի վիճակների այլազգիներին զինուորական ծառայութեան ենթարկելու վերաբերութեամբ՝ հետևեալ կարծիքը յայտնեց.

I. Անդրկովկասի ամբողջ ազգաբնակութիւնը, թէ տեղացի և թէ ոչ տեղացի, նոյնպէս և Թերէքի ու Կուբանի վիճակների այլազգիներին ենթարկել զինուորական ծառայութեան Զինուորագրական Ընդհանուր Կանոնադրութեան (Օրէնքների հաւաքածու հ. IV, գիրք I, հրատ. 1876 թիւ, յօդ. 1—224) հիման վերայ, ներկայ օրէնսդրութեան III-րորդ յօդուածում ցոյց տուած փոփոխութիւնների և յաւելուածների հետ միասին, 'ի նկատի առնելով և այն ժամանակաւոր կարգադրութիւնները, որոնք բերված են IV-րորդ յօդուածում։ Սորա հետ միասին մահմեդական դաւանութեան պատկանող անձանց համար նորակոչ զինուորներ տալու պարտաւորութիւնը ժամանակաւորապէս, մինչև նոր կարգադրութիւն անելը, փոխարինել առանձին դրամական տուրքով յօդուտ Պետական Գանձարանի, տալով այդ տուրքին հետևեալ անունը՝ զինուորական ծառայութիւնը անձամբ կատարելուն փոխարինող տուրք։

II.—I յօդուածում սահմանված կարգերը գործադրել սկսած 1887 թուի զինուորակոչից, յետաձգելով դոցա գործադրութիւնը Բաթումի, Արդուինի և Սուխումի (բացի դորա Օկումեան բաժինը) շրջաններում, Քութայիսի նահանգում, նոյնպէս և Կարսի վիճակում ու Զօրնօմօրեան շրջանում մինչև 1889 թուի զինուորակոչը:

III.—Փոփոխելով և լրացնելով զինուորագրական կանոնադրութեան (Օրէնքների հաւաքածու հ. IV, գիրք I, հրատ. 1876 թուի) պատկանեալ յօդուածները սահմանել.

1. Իրանց տարիքի համաձայն զինուորական ծառայութեան ենթարկվող Կովկասեան գաղթականները, որոնց համար օրէնքով (Օրէնքների հաւաքածու հ. XII, մասն II, օտարերկրացի գաղթ. կանոնադրութիւն) վերապահված է Ռուսաստանից դուրս գնալու իրաւունքը,—այն դէպքում, երբ կամենան օգտվել այդ իրաւունքից, կ'ենթարկվեն այս կանոնադրութեան (1876 թուի հրատարակ.) 3-րորդ յօդուածի ծանօթութեան մէջ ամփոփված կարգադրութիւնների զօրութեանը:

2. Կովկասում իւրաքանչիւր տարվայ զինուորակոչը և վիճակահանութեամբ ծառայութեան մէջ նշանակելը տեղի է ունենում հոկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 31-ը: Սոյն կանոնադրութեան 76—78 յօդուածներում յիշատակված անձանց և հիմնարկութիւնների կողմից եղած միջնորդութեան դէպքում, քաղաքացիական մասի Կառավարչապետը թոյլ է տալիս շեղվել այդ ժամանակամիջոցից, տեղեկացնելով այդ առարկայի վերաբերութեամբ իր տուած իւրաքանչիւր թոյլտուութեան մասին ներքին գործերի և պատերազմական Մինիստրներին:

3. Անդրկովկասում և Թերէքի ու Կուբանի վիճակների այլազգի բնակիչներ ունեցող տեղերում, իսկական ծառայութեան մէջ եղող զիւղաբնակ և քաղաքաբնակ անձինք, բացի իբրև զինասէր մտնողներից, նոյնպէս և այն ընտանիքները և ծուխերը, որոնցից այդ անձինք ընդունված են ծառայութեան մէջ, ազատվում են բոլոր անձնական՝ պետական, զեմստվոյի և հասարակական դրամական տուրքերից. իսկ բնական հարկերից այդ ժամանակամիջոցի ընթացքում ազատվումեն միայն ծառայութեան մէջ մտնողները: Այն անձինք, որոնք գտնվումեն պահեստի մէջ կամ որոնք կանչվել են պահեստից զօրքի շարքերի մէջ մտնելու, նոյնպէս և այն ընտանիքները և ծուխերը, որոնց նոքա պատկանումեն, օգտվում են յիշեալ արտօնութիւններից մի տարի ժամանակով, սկսած այն օրից, երբ նոքա մտցրվել են պահեստի մէջ կամ արձակվել են ծառայութիւնից:

4. Կովկասեան երկրի այլազգի բնակիչներից՝ ընտանեկան դրութեան վերաբերեալ առաջին կարգի արտօնութիւնից օգտվում են, բացի 45 յօդուածի 1 կէտի մէջ յիշված անձինքներից, և հետևեալները. ա) աշխատանքի անընդունակ աներոջ կամ այրի զոքանչի ընտանիքում աշխատանքի միակ ընդունակ փեսան, եթէ այդ փեսան ապրումէ աներոջ կամ այրի զոքանքի հետ միևնոյն տնտեսութեամբ, և կամ նոցա հետ մի ծուխ է կազմում, և բ) ընտանիքաւոր միայնակները:

5. Ազնուական դասակարգին չը պատկանող Կովկասեան բնիկների մէջ օտար զաւակներ որդեգրելը ապացուցվում է այն կարգով, որը ցոյց է տուած Պետական Խորհրդի 1885 թ. յունվարի 15-ի Բարձրագոյն Հաստատված այն կարծիքի մէջ, որը վերաբերում է մեշչանների և գիւղական դասակարգերում օտար զաւակներ որդեգրելու ապացոյցներին (օրէնսդր. Հաւաք. № 264):

6. Էջմիածնի Հայ-լուսաւորչական ճեմարանի աշակերտների վիճակով զօրքի մէջ ծառայութեան մտնելը՝ իրանց ցանկացած դէպքում, յետաձգվում է մինչև քսան և ութ տարեկան դառնալը՝ ուսումը աւարտելու համար:

7. Այն անձինք, որոնք առաջադիմութեամբ աւարտել են Հայ-լուսաւորչական հոգևոր ճեմարանում և սեմինարիաներում, ուսումը աւարտելուց յետոյ օգտվում են մի տարի յետաձգումով հոգևոր կոչում ընդունելու համար, որը ազատում է զինուորական ծառայութիւնից:

8. Զինուորական ծառայութեան արտօնութիւնների վերաբերութեամբ Կովկասեան ուսումնարանները չորրորդ կարգի դպրոցական հիմնարկութիւնների շարքի մէջ հաշուելը տեղի է ունենում, Կովկասի քաղաքացիական մասի Կառավարչապետի հետ նախօրէն բանակցելուց յետոյ, Մինիստրի կամ Կառավարչապետի (որի իրաւասութեան ներքոյ որ գտնվում է ուսումնարանը) զինուորական և ժողովրդական լուսաւորութեան Մինիստրութիւնների փոխադարձ համաձայնութեան հիման վերայ:

9. Թերէքի և Կուբանի վիճակներում թոյլ է տրվում շրջանները (գաւառները) բաժանել մի քանի զինուորակոչական բաժիններին:

10. Եթէ Կովկասում, տեղական առանձնայատկութիւնների պատճառով, դժուարութիւններ կը պատահեն սոյն կանոնադրութեան 71-երորդ յօդուածում սահմանված չափով զինուորակոչական բաժիններ կազմելու, այն ժամանակ ցոյց տուած չափից դուրս բաժիններ կազմելու ենթադրութիւնները ներկայացնվում են քաղաքացիական մասի Կառավարչապետի վճռին: Նոյնպէս և նորա վճռին պէտք է ներկայացնվեն այն ենթադրութիւնները, որոնք վերաբերում են արդէն կազմված բաժինների մէջ մտցնելիք փոփոխութիւններին:

11. Զինուորակոչական բաժիններ կազմելիս՝ վօլօստները, նոյնպէս և զիւղական և աուլի հասարակութիւնները ոչ մի դէպքում մաս-մաս չեն բաժանվում:

12. Գաւառներից (շրջաններից) բաժիններ անելու ենթադրութիւնների կազմելը և կոչնատեղերի որոշելը յանձնվում է առանձին յանձնաժողովների: Այդ յանձնաժողովները կազմվում են՝ ազնուականների գաւառական պարագլխից, քաղաքագլխից (ստարօստայից), գաւառապետից (շրջանապետից), հաշտարար միջնորդից և նահանգապետի (վիճակապետի) նշանակած՝ գաւառական (շրջանի) քաղաքի կամ դրան փոխարինող աւանի բնակչից: Այն տեղերում, ուր չը կան ազնուականութեան պարագլուխներ, կամ որտեղ հաստատված չեն հաշտարար միջնորդներ,

ազնուականութեան գաւառական պարագլխին և հաշտարար միջնորդին փոխարինում են տեղացի պատուաւոր բնակիչներ. իսկ այն քաղաքներում, որտեղ չի մտցրված 1870 թուի յունիսի 16-ի քաղաքային պլաժենիան և չը կայ պարզ կազմակերպված քաղաքային հասարակական վարչութիւն, քաղաքագլխին փոխարինում է քաղաքի հասարակութեան պատգամաւորը՝ տեղական ոստիկանական վարչութեան մէջ: Այդ փոխարինութիւնը տեղի է ունենում նահանգապետի (վիճակապետի) կարգադրութեամբ: Յիշված յանձնաժողովներին նախագահում է ազնուականների գաւառական պարագլուխը, իսկ այնտեղ ուր չը կայ ազնուականութեան ներկայացուցիչ,—գաւառապետը (շրջանապետը):

13. Սոյն կանոնադրութեան 80-երորդ յօդուածում ցոյց տուած տեղեկութիւնները կազմված զինուորակոչական բաժինների վերաբերութեամբ՝ նահանգապետների (շրջանապետների) ձեռքով ներկայացնվում են քաղաքացիական մասի Կառավարչապետին, իսկ նա այդ տեղեկութիւնները ուղարկում է ներքին գործերի և զինուորական Մինիստրութիւններին:

14. Բաղուի, Ելիսաւետպոլի և Երևանի նահանգներում զինուորագրական նահանգական ատեանի մէջ՝ նահանգական շինական գործերի ատեանի երկու անդամների փոխարէն նշանակվում են նահանգական նորաբնակների գործերի ատեանի երկու անդամները:

15. Թերէքի և Կուբանի վիճակներում՝ վիճակի զինուորագրական ատեանը կազմվում է՝ վիճակապետի նախագահութեամբ, փոխ-նահանգապետից, վիճակային վարչութեան խորհրդականից, զինուորական գաւառապետից, որը ապրում է վիճակային քաղաքում, նահանգական դատարանի պրոկուրորից կամ նորա ընկերից:

16. Անդրկովկասեան նահանգներում և Թերէքի ու Կուբանի վիճակներում գաւառական (շրջանի) զինուորագրական ատեանը կազմվում է ազնուականութեան գաւառական պա-

բաղլիսից, գաւառապետից կամ այդ կոչմանը համապատասխանող անձից, հաշտարար միջնորդից, որին պէտք է նշանակի նահանգապետը, և մի սպայից, որին պէտք է նշանակէ զինուորական վարչութիւնը: Ատեանին նախագահում է ազնուականութեան գաւառական պարագլուխը, իսկ այն տեղերում, ուր չը կայ ազնուականութեան ներկայացուցիչ,—գաւառապետը (շրջանապետը): Այնտեղերում, որտեղ չեն հաստատված հաշտարար միջնորդներ, դրանց փոխարինումեն նահանգապետի (վիճակապետի) նշանակած աստիճանաւորը և տեղացիներից երկու պատուաւոր բնակիչներ, նոյնպէս նահանգապետի ընտրութեամբ: Երբ ատեանը գործում է այնպիսի զինուորակոչական բաժնում, որի մէջ կան և քաղաքաբնակներ, այն ժամանակ ատեանը լրացնվումէ քաղաքային վարչութեան մի անդամով, որին նշանակումէ ինքը վարչութիւնը, իսկ ուր չը կայ քաղաքային վարչութիւն,—քաղաքային հասարակութեան ընտրած անդամով: Բացի դորանից, երբ ատեանը գործում է կոչնատեղում, նրա անդամների թւի մէջ մտցնվում է բաժնի բնակիչներից մէկը, որին նշանակումէ նահանգապետը (վիճակապետը):

17. Թիֆլիս քաղաքում կազմվում է քաղաքային զինուորագրական առանձին ատեան, քաղաքագլխի նախագահութեամբ, և բաղկանումէ՝ մի սպայից, որին նշանակումէ զինուորական վարչութիւնը, մի աստիճանաւորից, որին նշանակումէ Թիֆլիսի ոստիկանապետը, և քաղաքային հասարակական վարչութեան երկու անդամներից, նոյն վարչութեան ընտրութեամբ:

18. Այն կանոնադրութեան 91-երորդ յօդուածի ծանօթութեան մէջ յիշատակված կարգադրութեան գործադրութիւնը տարածվումէ նոյնպէս և Կովկասեան երկրի վերայ:

19. Անդրկովկասում և Թերէքի ու Կուբանի վիճակների այլազգի ժողովուրդ ունեցող տեղերում, ամէն կացութեան մարդիկ հաշվումեն զինուորակոչական բաժինների մէջ այն քաղաքների և գիւղերի գտնված տեղի համեմատ, որոնց մէջ նոքա մշտական բնակութիւն ունեն:

20. Կովկասեան երկրում զինուորակոչական ցուցակները կազմվումեն՝ ա) գիւղական բնակիչների համար,—առանձին յանձնաժողովների ձեռքով. այդ յանձնաժողովները կազմվումեն գիւղական (աուլի) տանուտէրից, գիւղացի երկու բնակիչներից, որոնց նշանակումէ գաւառապետը (շրջանապետը) և գիւղական քահանայից. այս յանձնաժողովները գտնվումեն գաւառական (շրջանի) ոստիկանութեան պաշտօնեաների վերահսկողութեան և ղեկավարութեան ներքոյ. բ) մէշչաններինը և արհեստաւորներինը՝ այն քաղաքներում, ուր մտցրված է 1870 թ. քաղաքային պ ա լ ա ժ ե ն ե ա ն,—քաղաքային վարչութիւնների ձեռքով. գ) այն տեղերում, ուր մտցրված են պարզ կազմակերպված հասարակական վարչութիւններ,—քաղաքային ստարօստաների ձեռքով, և դ) այն տեղերում, ուր կան պատգամաւորներ քաղաքային հասարակութեան կողմից՝ տեղական ոստիկանական վարչութիւնների մէջ,—այդ պատգամաւորների ձեռքով, յիշեալ վարչութիւնների աջակցութեամբ: Ուրիշ կացութեան պատկանող անձանց համար զինուորակոչական ցուցակները կազմվումեն տեղական ոստիկանութիւնների ձեռքով:

21. Անդրկովկասում և Թերէքի ու Կուբանի վիճակների այլազգի ժողովուրդ ունեցող տեղերում, զինուորակոչական ցուցակները կազմելու համար իբրև հիմք ծառայումեն՝ ա) մետրիքական քաղուածքները, բ) ընտանեգրական ցուցակները և գ) անձնական ցուցմունքները:

22. Անդրկովկասում և Թերէքի ու Կուբանի վիճակների այլազգի ժողովուրդ ունեցող տեղերում, այն դէպքում, երբ մետրիքական քաղուածքի և մետրիքական վկայականի, կամ ընտանեգրական ցուցակների և ուրիշ դոկումենտների ցուցմունքներին նայելով՝ տարիքի վերաբերութեամբ տարաձայնութիւններ են առաջ գալիս, հասակը որոշվումէ քրիստոնեաների համար՝—մետրիքականով, իսկ ոչ-քրիստոնէաների համար՝—ըն-

ազգանեզրական ցուցակով կամ ուրիշ դոկումենտներով, եթէ դոցա ցուցմունքների ստուգութեան մասին կասկածներ չեն ծագում:

23. Անդրկովկասում և Թերէքի ու Կուբանի վիճակների այլազգի ժողովուրդ ունեցող տեղերում, բացի այս կանոնագրութեան 112-երորդ յօդուածի 1 կէտի մէջ յիշատակված դէպքերից, հասակը որոշվում է արտաքին տեսքով և հետևեալ դէպքերում. ա) քրիստոնէական դաւանութեան պատկանող անձինքներինը՝ այն դիպուածում, երբ տարիքը ցոյց է տուած միայն ընտանեզրական ցուցակի մէջ, և կասկած է յարուցանվում այդ ցուցմունքի ստուգութեան մասին, և բ) ոչ-քրիստոնէական դաւանութեան պատկանող անձինքները՝ այն բոլոր դիպուածներում, երբ կասկած է ծագում հասակի վերաբերեալ վկայականների ստուգութեան մասին, առանց 'ի բաց առնելու և՛ մետրիքականները:

24. Այն տեղերում, ուր չը կան վօլոստի վարչութիւններ, մասնաւոր զինուորակոչական ցուցակները կախվում կամ դրվում են, դոցա փոխարէն, գիւղական վարչութիւնների մէջ:

25. Այն անձինք, որոնք կամենում են զինուորական ծառայութիւնը կատարել ոչ թէ այն բաժնում, որի վերայ գրված են, այլ մի ուրիշ բաժնում, պարտաւոր են այդ մասին յայտարարել՝ ներկայացնելով իրանց իրաւունքը հաստատող վկայականներ Զինուորագրական Կանոնագրութեան 119 յօդուածի հիման վերայ, ոչ ուշ քան մայիսի 1-ը այն տարուայ, երբ ենթարկվում են զինուորակոչին: Գիւղական բնակիչները, մէշչանները և արհեստաւորները այդ մասին պէտք է յայտարարեն թէ իրանց ընտրած նոր բաժնի և թէ այն բաժնի գիւղական կամ քաղաքային վարչութիւններին, որի վերայ իրանք գրված են. իսկ միւս դասակարգերին պատկանող անձինք պէտք է յայտարարեն թէ մէկ և թէ միւս բաժնի տեղական ոստիկանութիւններին:

26. Այն տեղերում, որտեղ չեն հիմնված վօլոստի վարչութիւններ, զինուորակոչին ներկայ գտնվելուն արգելք եղող

հիւանդութիւնը վաւերացնվում է գիւղական տանուտէրի վկայականով, որը հաստատված պէտք լինի տեղական ոստիկանութեան կողմից:

27. Այն տեղերում, որտեղ գործում են լեռնականների բանաւոր դատաստանները, վիճակահանութեան մէջ մասնակցած այն անձինք, որոնք այդ դատարանների վճռով դատապարտված են հասարակութիւնից (կանլի) ժամանակաւորապէս հեռանալու, ենթարկվում են անմիջական զննութեան և մտցնվում զօրքի ծառայութեան մէջ. իսկ հասարակութիւնից այդ անձինքների հեռացնելը յետաձգվում է մինչև այն ժամանակ, երբ նոքա իսկական ծառայութիւնից կը մտցնվեն պահեստի մէջ:

28. Անդրկովկասում և Թերէքի ու Կուբանի վիճակներում, այն ծախքերը, որոնք սոյն կանոնագրութեան 166 և 167 յօդուածների զօրութեամբ մտցրված են նահանգական զեմստվոյի ընդհանուր տուրքի մէջ, հոգացվում են Պետական Գանձարանից:

29. Հաշմութեան կամ հիւանդոտ դրութեան պատճառով գիւղական անձինքների աշխատանքի անընդունակ լինելը վաւերացվում է գիւղական ժողովների ձեռքով, որոնց վճիռները այդ խնդրի վերաբերութեամբ հաստատվում են վօլոստի (գիւղական կամ աուլի) վարչութիւններից կամ դոցա համապատասխանող հիմնարկութիւնների կողմից:

IV. Զինուորագրական Կանոնագրութիւնը Կովկասում գործադրելիս՝ պահպանել հետևեալ ժամանակաւոր կանոնները.

1. Թերէքի ու Կուբանի վիճակների և Անդրկովկասեան տեղական ազգաբնակութեան պատկանող նորակոչ զինուորները, Զինուորական Մինիստրի կարգադրութեամբ, դասաւորվում են Կովկասում տեղաւորված առանձին կազմվող զօրքերի մէջ: Այս զօրքերը լրացնելու համար անհրաժեշտ մարդոց թիւը, առանց մտնելու կայսրութեան տարեկան ընդհանուր զինուորակոչի գումարի մէջ, որոշվում և յայտնվումէ, վերջինիս հետ

միասին, սոյն կանոնագրութեան 9-երորդ յօդուածում ցոյց տուած կարգով։

2. Նախընթաց յօդուածում յիշատակված զօրքերի մէջ վիճակով մտնողները, մինչև նոր կարգադրութիւններ տնելը, իսկական ծառայութեան մէջ պէտք է մնան երեք տարի, իսկ պահեստի մէջ՝ տասն երկու տարի։

3. Կովկասեան երկրի այն տեղերում, որտեղ անասնապահութիւնը արդիւնաբերութեան գլխաւոր ճիւղն է կազմում, թոյլ է տրվում, բայց ոչ աւելի քան մի տարով, յետաձգել այն անձանց իսկական զինուորական ծառայութեան մէջ մտնելը, որոնք անմիջապէս իրանք են խնամում իրանց պատկանող խոշոր և մանր ապրանքների հօտերը։ Այդպիսի յետաձգութեան իրաւունք ստանալու վերաբերութեամբ՝ Կովկասի զանազան տեղերի համար ապրանքների ամենափոքր քանակութիւնը որոշում է քաղաքացիական մասի Կառավարչապետը։

4. Սոյն կանոնագրութեան 52-երորդ յօդուածի 1 ծանօթութիւնը,—որը թոյլ է տալիս յետաձգել այն անձանց զինուորական ծառայութեան մէջ մտնելը, որոնք պատկանում են առևտրական, գործարանական կամ արդիւնաբերական հիմնարկութիւններ պահող ընտանիքներին,—Կովկասեան երկրի վերայ չի տարածվում։

5. Կովկասեցի այն բնիկներին, որոնք մինչև այս օրէնքի հրատարակութեան օրը ընդունված են եղել ուսումնարանական հիմնարկութիւններում, իրաւունք է տրվում, իրանց խնդրած դէպքում, ուսումը աւարտել, առանց սահմանափակելու նրանց որևիցէ տարիքով։

6. Նահանգական զինուորագրական ատեանի պարտաւորութիւնները Զաքաթալի շրջանում կատարում է Թիֆլիսի նահանգական ատեանը, որի անդամների վերայ, յիշեալ շրջանի գործերի քննութեան ժամանակ, աւելացնվում է շրջանի զինուորական-ժողովրդական վարչութեան մի պաշտօնատար անձը՝ քաղաքացիական մասի Կառավարչապետի նշանակելովը։

7. Դաղեստանի վիճակի և Զաքաթալի շրջանի զինուորագրութեան գործերը վարող հիմնարկութիւնների կազմակերպութիւնը որոշում է քաղաքացիական մասի Կառավարչապետը։

8. Անդրկովկասի բնակիչների և Թերէքի ու Կուբանի վիճակների այլազգիների թուի վերաբերութեամբ՝ զինուորակոչական ցուցակների մէջ մտցրած տեղեկութիւնները ներկայացնվումեն Կովկասեան զինուորական շրջանի զօրքերի Հրամանատարին։

9. Երբ Կովկասեան զինուորական շրջանի զօրքերի Հրամանատարը ստանում է նախորդ յօդուածում յիշատակված տեղեկութիւնները, շրջանի շտաբը դասաւորում է տարեկան ընդհանուր զինուորակոչը (յօդ. 1) Թերէքի և Կուբանի վիճակների, Անդրկովկասի նահանգների և Զաքաթալի շրջանի մէջ՝ այն անձանց թուի համեմատ, որոնք մտցրված են այդ վիճակների, նահանգների և շրջանի զինուորակոչական ցուցակների մէջ։ Այդ դասաւորութիւնը հաստատվում է Կովկասեան զինուորական շրջանի զօրքերի Հրամանատարի կողմից և ապա ուղարկվում է նորա ձեռքով զինուորական և ներքին գործերի Մինիստրներին, հաղորդվում է նահանգական (վիճակային) զինուորագրական ատեաններին և յայտարարվում է 'ի գիտութիւն ընդհանրութեան։

10. Կովկասեան երկրում զինուորագրութիւնը մտցնելու առաջին հինգ տարվայ ընթացքում վիճակահանութեան հերթը և կարգը որոշում է Կառավարչապետը։

11. Կովկասեան առաջին զինուորակոչի այն նորակոչ զինուորները, որոնք կ՝ապացուցանեն, թէև նոյն իսկ վիճակ հանելուց յետոյ՝ ընտանեկան դրութեան արտօնութիւն ստանալու իրանց իրաւունքը, եթէ միայն այդ մասին յայտարարել են նախ քան վիճակարկութիւնը, կ՝արձակվեն իսկական ծառայութիւնից և կը մտցրնվեն պահեստի մէջ։

12. Մինչև Կովկասի մէջ տարեկան զինուորակոչի չափը որոշող ընդհանուր կարգերի մտցնելը, սոյն կանոնա-

դրութեան 164-երորդ յօդուածի 3 կէտում նշանակված ծախքերի վերաբերութեամբ, ընդհանուր հաշուով, պէտք տրվի երկու երկու ռուբլի իւրաքանչիւր նորակոչ զինուորի համար: Այդ հիման վերայ վճարելի ընդհանուր գումարը Կառավարչապետը բաժանումէ, իսկական պէտքերի համեմատ, Թերէքի և Կուբանի վիճակների և Անդրկովկասի վարչական առանձին մասերի մէջ, տեղեկացնելով այդ մասին Ֆինանսների և ներքին գործերի Մինիստրներին: Նահանգի կամ վիճակի համար նշանակված գումարները բաժանվում են գաւառական (շրջանի) և քաղաքային ատեանների մէջ, նահանգական (վիճակային) զինուորագրական ատեանների որոշումների համաձայն:

V. Թոյլ տալ, որ IV յօդուածի 1 կէտի հիման վերայ Թերէքի և Կուբանի վիճակների այլազգիներին և Անդրկովկասի տեղացի ժողովրդին պատկանող նորակոչ զինուորների համար կազմվող զօրքերի մէջ՝ ընդունվեն քրիստոնեայ և մահմեդական դաւանութեան պատկանող՝ 21-ից մինչև 30 տարեկան հասակի զինասէրներ, այն պայմանով, որ զոցա թիւը իւրաքանչիւր զօրաբաժնում չանցնի Զինուորական Մինիստրի որոշած սահմանափակ չափից:

Նորին Կայսերական Մեծութիւնը Պետական Խորհրդի այդ կարծիքը, 1886 թվի Մայիսի 28-ին, բարեհաճեց Բարձրագոյն հաստատել և հրամայեց կատարել:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
именна Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0213545

41.172